

ԱՅՈ



ԶՈՒՄԱՐ

ՏԵՂԵԿԱԾՈՒ ՍՊԱՀԱՄԵՐԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ, ԹՎԻ 111, ՆՈՅԵՄԲՐԵՐ-ԳԵԿՏԵՄԲԵՐ 2015

60-ԱՄԵՐԿ



Ն.Գ. ՀԱՅ Ա.Ս. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆ

Ն.Գ. ՀԱՅ ԿԱՆԱՔ  
ԳՐՈՒԹԻԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ



100-ԱՄԵՐԿ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

• 2 ÒôàÔ Üàð î 2 ðô 2 Ú , ÈØ 2 ð  
    Ð 2 Ø 2 Ð 2 Ú Í 2 Í 2 Ü âàðê  
2 è 2 æÜ 2 Ð o ð Á àô Á Èô Ü Ü o ð

**Սոյն գրութիւնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի 2016 տարւայ անդրանիկ պատգամի խտացումն է (արեւմտահայերէն), տրւած Վեհարանի դահլիճի մէջ, Ամանորի Ս. Պատարագից յետոյ, 2016-ի յունիսի 1-ին:**

Նոր Տարին Ակատուած է հաջուեսուութեան ու միաժամանակ՝ մեր կեանքի յառաջիկայ հանգրուանը ծրագրելու եւ առաջնահերթութիւն-ները ճշդելու աղիք: Այսօր, երբ 2015 թուականը պլեւս կը դառնայ անցեալ եւ կը դիմաւորենք 2016 թուականը, անհրաժեշտ է որ ճշդենք բացուող նոր տարուան ընթացքին մեր ազգի առաջնահերթութիւն-ները, որոնք Մեր հայեցողութեամբ մեր հաւաքական կեանքին մէջ պէտք է առանցքային տեղ գրաւեն: Այս հայեցակէտով, Մենք կ'ու-զենք հակիրճ կերպով մատնանշել չորս բնագալաւոներ.-



**Ա) 2015 տարին հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ վստահաբար պիտի արձանագրուի որպէս մեր պահանջատիրական պաքարին մէջ յատկանշական իրագործումներ արձանագրած տարի մը: Անցնող տարուան ընթացքին միասնակամ ոգիսու ու ամուր վճռակամութեամբ ոչ միայն արժանի յարգանքով նշեցինք Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը, ոչ միայն մեր մէկուկէս միլիոն նահատակները սրբադասեցինք, այլ նաև մեր ազգի պայծառ ապագային նկատմամբ մեր հաւատքը աւելի՝ խորացուցինք ու մեր պահանջատիրական կամքը աւելի՝ պրկեցինք: Ի՞նչ պէտք է ընենք 100-ամեակէն յետոյ: Ծիշը է, 100-ամեակը որպէս թուական անցեալին կը պատկանի այլեւս. սակայն 100-ամեակէն եկող ոգին, հաւատքը, կամքը, յանձնառութիւնը ի խնդիր մեր ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման, պէտք է շարունակուի նոր մղումով, աւելի լայն տարրողութեամբ ու միշտ միասնական ճիգով: Հեռու ամէն տեսակ ձեւական ու քարոզչական մօտեցումներէ, հայ ժողովուրդի արդար դատի հետապնդումը պէտք է առաջին հերթին դրուի աւելի կազմակերպ հունի մէջ՝ ներկայ աշխարհաքաղական իրականութիւններու համահունչ ռազմավարական ու մարտավարական նոր մօտեցումներու որդեգրումով: Եւ երկրորդ, անհրաժեշտ է մեր պահանջատիրութիւնը իրաւական ընթացքի մէջ ներկ՝ միշագգային օրէնքի տուեալներու լոյսին տակ, ուսումնասիրուած ու ծրագրուած կերպով: Եթէ այս աշխատանքին շնորհնք, 100-ամեակի ստեղծած ոգեւորութիւնը, ինչպէս նաև միշագգային համայնքին մօտ մեր դատին նկատմամբ յառաջացած հետաքրքրութիւնը շուտով պիտի նուաղի:**

Բ) 2016 տարին 25 ամեակն է Հայաստանի երկրորդ անկախութեան հոչակման: Այս կարճ ժամանակահատ-  
ածի ընթացքին հայրենի մեր ժողովուրդին, ինչպէս նաև բարեկամ երկիրներու և Սփիտքին կողմէ հսկայ գործ  
կատարուեցաւ թէ Հայաստանէն ներս եւ թէ Հայաստանին համար: Արդարեւ, տնտեսութեան զարգացումը, ար-  
տաքին յարաբերութիւններու մշակումը, միջազգային կապերու հաստատումը, Հայաստանի բանակին կազմակեր-  
պումը, Ղարաբաղի վերակազմակերպումը ու ինքնապաշտպանութեան ամրացումը եւ այլ բազմաթիւ հախածեռ-  
նութիւններ մեծապէս նպաստեցին Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցներու ամրացման: Սա-  
կայն, կատարուած իրագործումներուն առընթեր, հարկ է իրապաշտ մօտեցումով նաև քաջութիւնն ու իմաստու-  
թիւնը ունենանք թերացումները ճիշդ տեսնելու ու զանոնք անկեղծօրէն մատնանշելու: Այս ծիրէն ներս՝ արտա-  
գալթը մեր հայրենիքին գոյութեան ու յարատեսութեան կոռուաններուն ուղղուած մեծագոյն հարուածն է, եւ մեր  
ազգին մարմնին վրայ կոտտացող սարսափազդու վերք մը. իսկ Հայաստանի տնտեսութեան պարզած վատա-  
ռոյց վիճակը ինչպէս նաև մեր ժողովուրդի կեանքըն ներս բարոյական ու ոգեհեն արժէններու լուսանցքալացու-

մը այլապէս լուրջ մտահոգութիւններ են: Այս վերքերուն դարմանումը հրամայական է ու անշետաձգելի: Հայրենիքը կը բարգաւաճի թերութիւնները սրբագրելով, ինչպէս նաև անոր առաւել հզօրացման իր բոլոր զաւակներուն գործօն մասնակցութեամբ:

**Գ) Հայաստանի ու Ղարաբաղի հզօրացումը կ'ենթադրէ նաեւ Սփիտքի հզօրացումը, եւ՝ փոխադարձաբար:** Սովորական կարգախոս մը չէ այս: Ան կ'ենթադրէ տարբեր գործելակերպ՝ իր խորքով, ոճով ու նպատակով թէ Հայաստանի եւ թէ Սփիտքի կողմէ: Դժբախտաբար Սփիտքը այսօր կը պարզէ բազմամարդ, բազմամատեսակ ու լայնատարած պատկեր մը: Ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած Սփիտքը իր յատակ նկարագիրը ունէր: Այսօր, սակայն, փաստորէն հայկական սփիտքներ գոյաւորուած են եւ Սփիտքը տեղ մը անտարբերութեան, այլ տեղ մը պատահականութեան կամ անորոշութեան ալիքներու քմայքին յանձնուած է: Արդ, եթէ Սփիտքը չվերակազմակերպուի եւ անոր կեանքի վախճանական ընթացքը դէպի հայրենիք չհունաւորուի, ինքզինք դէմ յանդիման պիտի գտնէ պղտոր ապագայի մը: Եւ որպէսզի Սփիտքը այս ճակատագրին չենթարկուի, Սփիտքի ամբողջական ու լուրջ վերակազմակերպման առընթեր, Հայաստան-Սփիտք ծեսական դարձած գործակցութիւնը պէտք է դրուի առողջ ու ամուր հիմներու վրայ եւ յատակ ուղղութեան մէջ, փոխադարձ սպասումներու եւ դերերու յատակեցումով: Հայաստանի ու Ղարաբաղի ներքին կեանքին առնչուած ծրագիրներու պարագային, բնականաբար Սփիտքը մասնակցողի դերին մէջ պէտք է ըլլայ: Սակայն, ճիշդ չէ որ համահայկական ծրագիրներու մշակման մէջ Սփիտքը սոսկ հետեւողի կրաւորական դերին մէջ ըլլայ: Հայաստան ու Սփիտք, որպէս մէկ ազգի երկու գլխաւոր միաւորները համահաւասար կերպով, որպէս գործակից ու լծակից պէտք է մասնակցին համահայկական բնոյթ ու նպատակ ունեցող աշխատանքներուն: Սա լոկ իրաւոնքի հարց չէ, այլ ազգաշինութեան ու հայրենաշինութեան համահայկական աշխատանքներուն մէջ Սփիտքը առաւելագոյն չափով ներգրաւելու ամէնէն ազդու միջոցն է՝ եւ ո՛չ թէ այլեւս սովորական դարձած այլ կերպերու կիրառումը: Հայաստանի անկախութեան քսանընինգ տարիներու ընթացքին ծեռք ձգուած փորձառութիւնը, իր դրական թէ բացասական երեսներով, սպասելի է որ լուրջ բննարկումի ենթարկուի, ուր բակալավր կողմէն պէտք է նաեւ ծրագրուին մեր բնելիքները:

**Դ) Սփիտքի իրաքանչիւր գաղութը իր իրայատուկ տեղը ու դերը ունի մեր համահավական մարտահրաւելք-ներու դիմագրաւման եւ յատկապէս Սփիտքի վերակազմակերպման աշխատանքներուն մէջ: Միշին Արեւելքի հայ գաղութներու ծիրէն Աերս Սուրբիոյ հայ գաղութը, որպէս հայրենամերձ գաղութ, արաբական աշխարհի մէջ իր կարեւոր դերը ունեցած գաղութ, եւ տակալին՝ մեր Եկեղեցական, ազգային, մշակութային ու կրթական կեանքին կարեւոր ներդրում կատարած գաղութ, անհրաժեշտ է որ մեր ժողովուրդին ու պետութեան յատուկ ուշադրութեան ու հոգածութեան առարկան դառնայ: Վերջին շուրջ չորս տարիներուն այս գաղութը տառապեցաւ, բայց չընկճուեցաւ. ոմանք հեռացան, սակայն գաղութը մնաց կանգուն. ոմանք յուսահատեցան, սակայն շատեր ամուր հաւատքով կառչած մնացին գաղութին: Անցնող տարիներուն մեր ժողովուրդի գաւակները իրենց Ծիրական աջակցութեամբ օգտակար հանդիսացան Սուրբիոյ մեր գաղութին: Պատին իրենց: Կարիքները տակալին բազմազան են ու այլազան: Ժամանակը հասած է որ Սուրբիոյ հայ գաղութը լծով վերականգնումի հաւաքական աշխատանքին: Սխալ է ողբերգական պատկերներով, անճիշդ թիւերով, միակողմանի վերլուծումներով ներկայացնել Սուրբիոյ հայութիւնը: Բնականաբար, Սուրբիոյ հայութեան թիւը որոշ նուազում արձանագրեց: Սակայն, Սուրբիոյ գաղութը հոգ է տակալին, Հալէպի, Գամիշլիի, Դամասկոսի, Քեսապի, Թարթուսի, Հասիչի եւ այլ գիւղերու մէջ: Սուրբիոյ հայութեան վերականգնումը համազգային առաջնահերթութիւն է: Հետեւաբար, հրամայական է նեցուկ կանգնիլ գաղութի յառաջիկայ աշխատանքներուն:**

Բնականաբար Հայաստանը, Ղարաբաղը եւ Սփիտքի իրաքանչիլք գաղութ իրենց դիմաց ունին նաեւ այլ կարեւոր ծրագիրներ ու անհրաժեշտ աշխատանքներ: Սակայն մատնանշշուած չորս մարզերը կը նկատենք համահայկական կարեւորութիւն Շերկայացնող առաջնահերթութիւններ: Վստահ ենք որ այս յաճճառութեամբ մասնակից պիտի դառնանք մեր ազգը դէպի առաւել հօգորացում առաջնորդող ծրագիրներու իրագործման:

2003-2004

*zðzθ z̄I z̄Aàôǣl àê  
θ̄ōl ǣi z̄ǖǖ l ǣeǣl ǣaú*



## ՆՈՐ ՏԱՐԻ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ

**«Աշխատում եմ անցեալը մոռանալ ու նայել գալիքին» (Փլա 3.13):**

Անցեալի եւ ապագայի խաչմերուկին ենք այսօր, երբ կանգնել ենք անցեալի ծեղքերումների եւ ձախողութիւնների, գալիքի իրագործումների եւ անա-

կընկալների կամրջի վրայ: Մի կողմից նայում ենք արդէն հեռացած անցեալին, միևնույն կողմից աներեւելի գալիքին: Եւ այսօր այնքան իրական ու գեղեցիկ է հնչում Պողոս առաքեալի՝ իր իսկ անձի միջից մեզ փոխանցուղ պատգամ-խօսքը. «Աշխատում եմ անցեալը մոռանալ ու նայել գալիքին» (Փլա 3.13):

Առաքեալը թելադրում է՝ ժամանակը լցնել, ժամանակը օգտագործել, ժամանակը իմաստաւորել: Եւ այս իրագործելու համար պէտք չէ արգելափակել անցեալի մէջ. չանձնել անցեալի ձախողումներին, անցաղոյութիւններին, սխալներին եւ մեղքերին: Առաքեալը ինք-զինք նմանեցնում է վազորդի, որը մրցավազքի է մասնակցում: Եթէ վազորդը իր դիմաց ճշտած նպատակակիցներին չնայի, չի կարող յալթանակի հասնել: Եթէ նա մի պահ յետ նայի, բնականօրէն կը շեղի իր ճանապարհից, կը դանդաղի իր վազքը եւ չի կարող մրցանակին տիրանալ:

Առաքեալը խորհուրդ է տալիս մեր առօրեայի մէջ մի պահ կանգ առնել եւ քնել ժամանակը: Եթէ Աստած ներկայ է մեր կեամքում, ժամանակը ճիշտ ձեւով կարելի է արժեւորել:

Արդարեւ, առաքեալի թելադրութեամբ գալիքն նայելու համար ամրութեշտ է պարտաւորեցմել մեզ հիմնական չորս սկզբունքների, եւ դրանք ընդունել իբրև կեանքի մարտահրաւերներ:

### Ա. Սոռանալ մեր անյաջողութիւնները եւ լինել ներողամիբ

Բոլորս էլ անկասկած ունեցել ենք ինչ որ անցաղոյութիւններ անցեալ տարում. ճիշտ է, որ այդ անցաղոյութիւնները չենք տեսնելու պատմութեան էջերի մէջ կամ նրանք չեն բացայացուելու այս կամ այն հեռատեսիլի հաղորդման ընթացքում կամ օրաթերթերում, սակայն նրանք հաստատ արձանագրած են մնալու մեր մտքում եւ ստերում:

Շատերիս համար նրանք ցաւոտ յիշողութիւններ են: Եւ ահա նոր տարին լաւագոյն առիթն է խորհրդածելու այն մարտահրաւերի մասին, որին դէմ յանդիման ենք գտնուում այսօր: Սա մի շատ կարեւոր պահ է, հաստա-

տակամ ու քաջաբար մենք մեզ ասելու, որ Աստծու օգնութեամբ գնալու ենք առաջ, հեռացնելու մեզանից այն մտքերը, որոնք չարչարում են մեզ՝ արιած կամ չարւած արարքի պատճառով:

Ցիսու Քրիստոս Խաչի վրայ ինքզինք նիրաբերեց եւ այդ նիրաբերումը ներողամտութեամբ իր բարձրակէտն ունեցաւ: Մենք եւս, որպէս քրիստոնեաներ պէտք է ընդունենք, որ մեր կեանքի մէջ ներողամտութիւնը իրականութիւն է դառնում Քրիստոսով: Երբ ընդունենք Քրիստոսի ներողամտութիւնը, դա նշանակում է, որ մենք կարող ենք ներել մեզ եւ մոռանալ մեր անյաջողութիւնները:

### Բ. Դրաժարւել ոխակալութիւնից

Երկրորդ մարտահրաւերը հրաժարումն է ոխակալութիւնից, որ նշանակում է ներել միմեանց: Ի՞նչ է ոխակալութիւնը: Այն մի շարունակական զայրոյթ է, որ յանախ զարգացնում ենք մեր սրտերում ընդունել մէկ ուրիշի: Ոխակալութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ աններող ոգի, որ մեզ տանում է դէպի աններող վերաբերմունքի եւ ի հետեւումն դրա՝ անկանխատեսելի գործողութիւնների:

Այն շատ վտանգաւոր է, որովհետեւ ինք իր մէջ աւերիշ յատկութիւններ ունի: Ոխակալութիւնը քանդում է ամուսնական կեանքը, բաժանում է ընտանիքը, կործանում ընկերութիւնը: Այն ո՛չ միայն աւերներ է գործում ուրիշների նկատմամբ, այլ ինքնաւերիշ է, ո՛չ միայն մեզ ֆիզիկապէս քանդում մեզ, այլ նաև՝ բարյապէս ու հոգեպէս կործանում է:

Բնականաբար չենք կարող շմտածել այն վերաբերմունքի մասին, որին արժանացել ենք ինչ-որ մէկի կողմից: Երբէք չենք կարող ձեւացնել, որ ոչինչ չի պատահել, բաց կարող ենք պարզապէս ներել:

Նոր տարին լաւագոյն ժամանակահատածն է ներելու միմեանց: Երբէք չասենք մեր Տիրոջը՝ Աստծուն, որ չեմ կարող ներել: Նայենք միայն Խաչի վրայ ցաւածած Աստածորդուում՝ թէ ինչպէս ներեց մեր մեղքերը, եւ սովորենք կանգ առնել, ոխակալ չլինել եւ ներել ինչ գնով էլ որ լինի: Հարցումը մեզ այս պահին պատասխանատութեամբ է հնչում, կարո՞ղ ենք կատարել: Այս՝

### Գ. Վերականգնել մեր յարաբերութիւնները

Ներողամտութեամբ մեր առջեւ բացում է մի նոր կեանք: Մենք ունենք իին եւ նոր յարաբերութիւններ, որոնցից ունանք կորել են, ունանք շարունակում են, ունանք էլ նոր են: Այս պահին պիտի մտածել վերականգնուում են մեր յարաբերութիւնները մեր եւ մեր

նմանների միջեւ, որոնք սխալ ընթացք են ունեցել մեր կեանքում: Առաքեալը հոռմէացիներին ուղղած իր նամակում թելադրում է. «Ինչքան կարող էք բոլորի հետ խաղա՞ղ ապրեցէք: Վրէժ լուծելու մասին երբէք մի մտածէք, այլ թողէք, որ Աստծու բարկութիւնը կատարի այն, որովհետեւ Սուրբ Գրքում Տէրն ասում է. «Ի՞մն է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՞ս եմ հատուցելու»» (Հո 12.18-19):

Այն: Նոր տարին լաւագոյն առիթն է վերականգնելու կոտրած յարաբերութիւնները: Երբէք չարին չարութեամբ չպատասխանենք այլ «Բարիով յաղթենք չարին»:

## Դ. Յեփ կենալ օրինազանցութիւններից

Նոր տարւայ նախաշեմին մեր մտորումների վերջին մարտահրաւերը, որին դէմ յանդիման ենք գտնուում չի- ել օրինազանց: Առաքեալը հոռմէացիներին ուղղած իր նամակում այս անգամ ասում է. «Մենք, որ մեռանք մեղքի համար, ինչպէս կարող ենք տակաւին ապրել մեղքի մէջ» (Հո 6.2): Մեր կեանքը կառավարող ուղղութիւնները օրէնքով են եւ օրէնքի մէջ: Օրէնքն է մեզ պահում կարգապահ մարդ, օրենքով է ձեւարուում մարդը, ձեւարուում են հասարակութիւններ եւ ժողովուրդներ: Մարդու փրկութեան համար դրած Աստծու մեծագոյն պարգևներից է օրէնքը: Օրինապահ լինել նշանակում է յարգել միմիանց:

Քրիստո մեռաւ եւ խափանեց մահւան ուժը, զօրութիւնը:

Հեռու մնանք մեղքի տիրապետութիւնից, մնանք մեզ ազատագրենք մեղքի գերութիւնից, թերեւացնենք մեզ մեղքի ծանրութիւնից եւ ապրենք մի նոր կեանքով: Ապրենք Քրիստոսի հետ եւ «Կենդանի՝ Աստծու համար, մեր Տիրոց՝ Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հո 6.11):

Այսօր որքան դժար է այս չորս սկզբունքներով առաջնորդել: Եթէ մարդը կարողանայ նման կերպ ապրել իր կեանքը, նման վերաբերմունք որդեգրել նախ իր անձի նկատմամբ, ապա՝ իր նմանի, հաստատ իմացէք, որ այս աշխարհի խաղաղ, արդար եւ երշանիկ, դրախտային աշխարհի կը վերածի:

Դժբախտաբար, այսօր ականատես եւ ականջալուր ենք լինում դժբախտ պատահարների, ոճրային դէպքերի, գազանային վերաբերմունքի, տարբեր միջավայրերում, որոնց դիմաց միայն ու միայն ընդվզում է առաջանում: Ո՞ւր ենք գնում որպէս մարդկութիւն, ի՞նչ ենք փնտուում, ի՞նչի՞նք ենք ուզում հասնել: Իշխանութի՞ւն, հեղինակութի՞ւն, փա՞ռք, պատի՞ւ թէ հարստութի՞ւն: Մի՞թէ այս բոլորին հասնելու համար պէտք է ուրիշին նաև առաջանային առաջանութիւնը սպանել, երկիրներ քանդել, ժողովուրդներ վերացնել ու

բնաշնչել: Ո՞վ է իրաւունք տւել մեզ նման կերպ վերաբերութիւն: Ոչ ոք: Աստւած մեզ տւել է ազատ կամք, տւել է միտք ճիշտը ընտրելու, իր կամքը կատարելու, եւ լաւագոյնին ձգտելու: Այս է ճանապարհը, որ մեզ կը տանի գերագոյն Բարիին, եւ այն ժամանակ է, որ մենք կը ստեղծենք մեր շուրջ դրախտային մի աշխարհ, ուր կապրենք խաղաղ, համերաշխ եւ երշանիկ:

Ցես չնայենք այլեւս, բայց չանուենք էլ անցեալի սխալները կամ լաւ կողմերը, այլ դրանցից դաս քաղելով՝ նայենք գալիքին, աւելի յուսադրուած, աւելի քաջ ու արի, առաւել նորոգուած Աստծու օժանդակութեամբ ու ներկայութեամբ՝ ստեղծելու մի աննման շրջապատ, ընկերութիւն, մարդկութիւն եւ աշխարհ:

Զփախցնենք այս հնարաւորութիւնը: Վերը յիշած չորս սկզբունքները, որպէս պարտաւորութիւն կատարենք, ներելու մնանք մեզ, ներելու ուրիշներին, ովքեր նեղացրել են մեզ, եւ ապրել խաղաղ ամենքի հետ, ամենքի համար: Հայցենք Աստծու ներողամտութիւնը եւ հաստատ իմացէք, որ նման դէպքում երկար չենք մնայ մեղքի գերութեան մէջ:

2015 թականը մեր ժողովրդի համար կարեւոր մի թական եղաւ, առաւել եւս պատմական մի անկիւնադարձային հանգրւան՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի առիթով: Տեղի ունեցան միջոցառումներ, սեմինարներ, գիտաժողովներ՝ պետական-եկեղեցական թէ ազգային ու միութեանական մակարդակներով: Շատ ձեռքբերումներ ունեցանք եւ դեռ կարող ենք ունենալ: Կարեւորը, 100-ամեակից յետոյ նայենք գալիքին, աւելի պրկելու մեր կամքը, աւելի տրամաբանած գործելու, պայքարելու եւ պահանջելու: Նայենք գալիքին, չշեղենք մեր ճանապարհից: ազգովին, միասնական ու նպատակադրուած քայլենք հասնելու համար վերջնական եւ փառապահն յաղթանակի:

Մաղթում եմ, որ 2016 թականը լինի աշխարհի համար խաղաղութեան ու համերաշխութեան տարի, մարդկութեան համար ողջամտութեան առիթ, հայութեան համար իմաստութեան, իր արդար իրաւունքների ձեռքբերման տարի. իսկ մեր համայնքի համար աղօթով ցանկանում եմ կայունութիւն, միասնականութիւն, նորանոր վերելք ու պայծառ ապագայ:

## ԾՆՈՐՀԿԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

**Սիրոյ Ձերմ ողջունիւ,  
Աղօթարար՝  
Բաբգէն Արքեպիսկոպոս Զարեան  
Առաջնորդ Սպահանի Հայոց Թեսի**

## ՈՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԵՒ Ի.Ի.Հ.-ՈՒՄ ՈՌԻՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԱՆ ՎԱՆՔ

Երեքշաբթի՝ նոյեմբերի 10-ի յետմիջօրէի ժամը 2:30-ին, Ս. Ամենափրկչեան վաճք այցելեց ռուսական պատմիրակութիւն, որին առաջնորդում էին Ռուսաստանի դաշնութեան Աշխատանքի նախարար Մաքսիմ Տոպիլինը եւ Իրանի Խալամական Հանրապետութիւնում Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան հայազգի Լեւոն Զաղարեանը: Ս.Ա. Վաճքում պատմիրակութեան անդամները հիւրենկալեցին Ծաղկեալ դահլիճում, որտեղ հանդիպում ունեցան Սպահանի հայոց թեմի բարեշան առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի հետ:



Հանդիպման ընթացքում առաջնորդ Սրբազն Հայոն ուրախութեամբ ողջունեց հիւրերի ներկայութիւնը, բարձր գնահատեց Ռուսաստանի Դաշնութեան

գործունեութիւնը՝ տարածաշրջանի կարգավիճակի կայունացման եւ խաղաղութեան հաստատման ուղղութեամբ եւ շնորհակալութիւն յայտնեց հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ, ինչպէս նաև Հայոց ցեղապանութեան ճանաչման գծով Ռուսաստանի բարեացակամ եւ դրական մօտեցման համար, միաժամանակ իր, Թումի ազգային իշխանութեան եւ հայ համայնքի անունից ցաւակցութիւն յայտնեց Ռուսաստանում վերջերս տեղի ունեցած ալիավթարի հետեւանքով մարդկային ծանր կորուստների համար:

Պրն. նախարարը շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար, շեշտեց, որ Ռուսաստանի Դաշնութեան արտաքին քաղաքականութիւնն է նեցուկ հանդիսանալ հարեւան երկրներում եւ տարածաշրջանում խաղաղութեան հաստատման եւ անդրութեան պահպանման գործին: Անդրադառնալով Հայաստան-Ռուսաստան բարիդրացիական կապերին, նախարարը ջեց, որ երկու երկրների փոխգործակցութիւնը ամուր հիմքեր ունեն, ինչի փաստը վերջերս Հայաստանի անդամակցութիւնն է Եւրասիական Տնտեսական Միութեանը: Զարգելի նախարարը իր արտայատութիւնների շարունակութեան մէջ, ընդգծելով Իրանում կրօնական եւ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների պաշտպանածութիւնը, իր ուրախութիւնը յայտնեց այդ կապակցութեամբ:

Հանդիպումն աւարտւեց բարեմաղթանքներով եւ նոր այցելութիւնների ակնկալիքով:

## Ս. ԱՐԳԱՐ ՆԱԽԱՎԿԱՅ ԹԱՎԱԻՈՐԻ ՏՕՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՅՈՒՄ

Շաբաթ՝ դեկտեմբերի 19-ի առաօտեան, Նոր Զուղայի Ս. Աստվածածին եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի, սուրբ եւ անմաս Պատարագ մատուցւեց հայոց թագաւոր Ս. Արգար նախավկայի տօնի առթիւ: Օրույն պատարագիչն էր արժն. Տ. Խաչատուր քինք. Զարգարեանը: Արարողութեանը մասնակցում էին հոգեւորականաց եւ դպրաց դասերը եւ հաւատացեալներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վաճքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ս. Արգար թագաւորի տօնին յիշատակում է նաև Արգարեան բարերար գերդաստանը, որը 1841 թականին հիմնադիրը հանդիսացաւ Նոր Զուղայի Ս. Աստվածածին եկեղեցու շրջափակում գտնւող «Հայկեան Հայրենասիրական» դպրոցի:



Վերոյիշեալ պատճառով եւ գեղեցիկ աւանդութեան համաձայն, այս արարողութեանը Շերկայացել էին նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի սաները՝ տեսչութեան, ուսուցչական կազմի ու ծնողական խորհրդի անդամների ընկերակցութեամբ:



Արարողութեան ընթացքում օրւան պատշաճ քարոզեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը: Գերշ. Սրբազն Հայրն

ի խօսքն ամբողջութեամբ ուղղեց դպրոցական սաներին, նրանց հասկանալի լեզով գեղեցկօրէն Շերկայացքուց օրւայ տօնի խորհրդով եւ նրա իմաստն ու նշանակութիւնը մեր կեանքում, շեշտելով որ բոլորս պէտք է Ս. Արքար նախավըկայ թագաւորին օրինակ ունենալով՝ ամբողջական վաստակութիւն եւ հաւատ ունենանք Աստծու եւ մեր Տիրոջ՝ Ցիսու Քրիստոսի նկատմամբ:

Արարողութեան ընթացքում մանկապարտէզ-նախակրթարանի բոլոր սաներն ու ներկայ ժողովուրդը Ս. Հաղորդութիւն ստացան:

Ս. Պատարագից յետոյ, եկեղեցու բակում, նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան միջոցով պատրաստած գունագեղ փաթեթաւորմամբ մրգեր յանձնեցին մանկապարտէզ-նախակրթարանի սաներին: Փաթեթները պատրաստել էին դպրոցի ծնողական խորհրդի միջոցով:

## Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՕՆ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ՁԵՌԵԱԴՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շաբաթ՝ դեկտեմբերի 26-ին՝ սուրբ Ստեփանոս Նախավկայի տօնին, նոր Զուղայի Ս. Ստեփանոս Եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի, մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ, որի ընթացքում կատարեց նաև սարկաւագական ձեռնադրութիւն: Պատարագին էր Շահինշահրի հոգեւոր հովի հոգ: Տ. Անանիա վրդ. Գուրանեանը:



Արարողութեանը նրեկայ էին նաև հիւրաբար նոր

Զուղայում գտնվող գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը, քահանայից եւ դպրոց դասերը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի, Ն.Զ. Հայոց Եկեղեցեաց Վարչութեան անդամները եւ հաւատացեալ ժողովուրդ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարում էր Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ցընթացս սուրբ եւ անմահ Պատարագի, գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի ձեռամբ սարկաւագական ձեռնադրութեան արժանացան բրշն. կիսասարկաւագներ Ալեքրտ Ղազարեանը, Արմէն եւ Արա Բաղումեանցերը, ովքեր ձեռնադրութեան խարտավիլակ հոգ: Տ. Արտակ վրդ. Արարեանի ուղեկցութեամբ, ծունկի եկած եկեղեցու դասից բարձրացան Ս. Խորան:



Գերշ. Սրբազն Հայրը ձեռնադրութեան Ս. Խորհըրդից յետոյ Եերկայացրեց տօնի իմաստն ու Ս. Ստեփանոսի Շահատակութեան խորհուրդը: Այս առիթով նա շնորհաւորեց Եկեղեցու բոլոր սարկաւագներին եւ մաղթեց, որ սարկաւագաց դասր ներշնչի ու ոգեւորի քաջ Նախասարկաւագի նվիրումով ու եռանդով: Դիմելով նորաձեռնադրեալներին՝ գերշ. Սրբազն Հայրը յորդութեց նրանց հետեւելու Ս. Ստեփանոսի մարտիրոսական, խորհրդաւոր, անակարկ, ազնիւ, հեզ ու մաքուր հոգեւոր ծառապութեանը:



Ձեռնադրութեան արարողութիւնից յետոյ, նոր ձեռնադրած սարկաւագները Ս. Խորանի վրայ շարունակեցին սահասարկել Ս. Սեղամին:

Ցաւարտ Ս. Պատարագի սրբազն արարողութեան, աւանդութեան հիմաձայն, գերշ. Սրբազն Հայրերի գլխաւորութեամբ եւ հոգեւորականց դասի մասնակցութեամբ Ս. Ստեփանոս Նախավկայի աշով կատարւեց Զրօրինէքի արարողութիւն, որի ընթացքում լուսաւոր մոմերով Եկեղեցու բեմ բարձրացան բոլոր սարկաւագները եւ կանգնեցին հոգեւորականաց դասի կողքին:

Եկեղեցական արարողութիւններից յետոյ, Ս. Ստեփանոս Եկեղեցու սրահում, Նոր Զուլայի Եկեղեցեաց վարչութիւնը կազմակերպել էր հիւրասիրութիւն: Ըստացքում հերթաբար շնորհաւորանքի ու գնահատանքի խօսքեր արտասանեցին Եկեղեցեաց վարչութեան,

Եկեղեցու Բարեզարդման կանանց յանձնախմբի եւ Օն-ուածեռնադրեալ սարկաւագների անունից:



Հիւրասիրութեան ընթացքում, սարկաւագների պատուին երգեց տկն Ռիթա Մկրտչեանը: Ապա գերշ. Սրբազն Հայրը Եկեղեցեաց վարչութեան միջոցով պատրաստած նէրներ յանձնեց սարկաւագներին:



Բովանդակալից եւ ոգեշնչող խօսք ասաց գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը եւ շնորհաւորանքներ լին-խանցեց բոլորին:

Առաջնորդ Սրբազն Հայրը ծրագիրը փակեց գեղեցիկ բարեմախթանքով՝ արեւշատութիւն եւ ծառայական բեղուն կեանք ցանկանալով սարկաւագներին եւ Եերկայ հաւատացեալներին:

## ՀՈԳԵՒՈՐ-ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆԻՒՐԻԱԾ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՍՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

2015 թւականի դեկտեմբերի 7-ի երեկոյեան ժամը 9:00-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, կազմակերպութեամբ Սպահանի հայոց թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի, տեղի ունեցաւ հոգեւոր-դասական երգերի համերգ, որն ընդգրուկում էր՝ Հայոց եկեղեցու հասատարոյր մեղեդիներ, տաղեր ու շարականներ, հայ եւ օտար հոչակաւոր երաժիշտների հոգեւոր եւ դասական ստեղծագործութիւններ: Հոգեւոր երգերի այս ձեռնարկը նվիրած էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, միաժամանակ թւականը համընկնելով Հայաստանի 1988 թւականի աւերիչ երկրաշարժի տարելիցին, անդրադարձ կատարեց նաև այդ դեպքին:



Ծրագիրն իրականացաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն սրբազան արք. Զարեանի հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ, ներկայութեամբ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հայր հոգչ. Տ. Անանիա Վրդ. Գումանեանի, հոգչ. Տ. Արտակ Վրդ. Արաբեանի, արժն. քահանայ հայրերի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ հայորդների:



Ծրագրի բացումը եւ հաղորդավարութիւնը կատարեց Թովմա սրկ. Գալստանեանը՝ թեմ հրահիելով Հայաստանից հրահրած բազում առաջնութիւններ եւ մրցանակներ շահած, Երեւանում «Կովկասեան առաջնութիւն միջազգային մրցոյթ»-ի, Բուլգարիայի Սոֆիա քաղաքում «Սոփիա գուանդ-փոյի 2015» միջազգային մրցոյթի եւ Լեհաստանի Վարշավա քաղաքում «Վիկտորիա 2015» միջազգային մրցոյթի գլխաւոր մրցանակակիր եւ «Վերածնունդ» առաջին մրցոյթ-փառատօնի դափնեկիր եւ ոսկէ մեդալակիր երգչուիի Լենորային (Արեւիկ Թանաշեան) եւ մասնագէտ դաշնակահարուիի Հեղինէ Կարապետեա-

նին, ովքեր եղակի կատարողականութեամբ եւ հանդիսատեսի բարձր գնահատանքին արժանացող հայկական եւ երոպական հոգեւոր եւ դասական երգերի ու երաժշտութեան հիպայատուկ համերգ մատուցեցին ներկաներին:

Ծրագիրն ընթացաւ երկու մասով. նախ հնչեց հոգեւոր երգացանկը՝ ընդգրկելով «Առ Մարի», «Այսօր տօնն է Ս. Ծննդեան», «Այսօր ձայնն հայրական», «Տաղ Ս. Աստուածածնայ», «Նոր Ծաղիկ», «Հասուն-հաւուն», «Stabat mater», «Panis Angelicus», «Bis du bei mir», «Silent night» շարականներն ու երգերը, ապա դասական բաժինը՝ բովանդակելով «Օօրօր», «Դիէ եաման», «Կոռունկ», «Դուն էն հուրին իս», «Estrellita», «Երգիր ինձ համար», «Il Bacio» երգերը:



Ընդմիջման պահին, հաղորդավարը խօսելով՝ ձեռնարկի իրականացման նպատակների մասին, միաժամանակ ներկայացրեց երիտասարդ երգչուին համառուս կենսագրականն ու բեղուն գործունեութիւնը:

Աւարտին թեմ հրահրեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն սրբազան արք. Զարեանը, ով բարձր գնահատեց երգչուին եւ դաշնակահարուին ծիրճն ու արևստի մակարդակը: Գերշ. Սրբազան Հայրը թեմ հրահրեց նաև ծրագրի պրոդյուսեր Վիգէն Թանաշեանին՝ երգչուին Լեռնորայի ամուսնուն եւ դրատանքի ու խրախուսանքի խօսքերով իր գործունակութիւնը յայտնեց նրանց գործի եւ ծառայութեան բարձր որակի համար:

## ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԻԱՆԴԻՈՂ ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳՐԹԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2015 թւականի դեկտեմբերի 16-ից մինչև 21-ը տարածող ժամանակահատվածում, Հայաստանից Նոր Զուղա ժամանեցին պրես Արշակի Գաբրունեանը եւ տկն Լիլիթ Տէր-Գրիգորեանը, ովքեր Նոր Զուղայի Հայոց դպրոցների զանազան օջակների համար կրօնի դասագրքեր պատրաստող կազմի գլխաւոր աշխատողներն են: Յիշեալ անձինք Նոր Զուղա էին ժամանել Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի յասուկ կարգադրութեամբ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի հրաւերով՝ Նոր Զուղայի և Շահինշահրի հայոց դպրոցներում դասաւանդող հայ ուսուցիչների, աշակերտութեան ծնողների եւ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմի հետ հանդիպելով՝ նպատակ ունենալով տարրական օլակի Ա, Բ եւ Գ դասարանների համար նոր ձեւարուած կրօնի դասագրքերի փոխանցման եւ դասաւանդութեան ճիշտ ձեւերը ներկայացնելը:



Ծրագիրն իրականացաւ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի կողմից հայոց դպրոցներ առարած շրջաբերականի գործադրմամբ: Հինգշաբթի՝ դեկտեմբերի 17-ի առաւօտեան ժամը 11:00-ին Նոր Զուղայի Կիրակնօրեայ դպրոցի սրահում հանդիպում տեղի ունեցաւ հայաստանի մասնագէտների եւ հայոց դպրոցի Ա, Բ եւ Գ տարրական աշակերտութեան ծնողների միջեւ, որտեղ կրօնական ընդհանորդ զրոյցով եւ մեր կեանքում Աստիածանչի անուրանալի կարեւորութիւնը շեշտելով հանդէս եկաւ պրես Արշակի Գաբրունեանը, իսկ կրօնի նոր դասագրքերի կապակցութեամբ եւ դրանց ուսուցման վերաբերեալ մեթոդական տեղեկութիւններ փոխանցեց տկն Լիլիթ Տէր-Գրիգորեանը:

Ուրբաթ՝ դեկտեմբերի 18-ի առաւօտեան ժամը 10:30-ին «Կատարինեան» դպրոցի սրահում եւ շաբաթ՝ դեկտեմբերի 19-ի յետմիջօրէի ժամը 4:30-ին Ա. Ամենափրկչեան Վանքի ժողովասրահում տեղի ունեցան հանդիպումներ Նոր Զուղայի և Շահինշահրի հայոց դպրոցների հայերէն բաժնի դասաւուների եւ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչների հետ, որտեղ մանրամասն կերպով քննարկեցին կրօնի դասագրքերի փոխանց-

ման ձեւերն ու իրայատկութիւնները, եւ բոլոր այն պարագաները, որ դասաւանդութեան ընթացքում պէտք է ուսուցիչների ուշադրութեան կենտրոնում լինեն: Դասաւանդութեան օրինակներ ներկայացնեցին եւ ընդհանուր գծերով յատկապէս աստածաշնչեան դրագների խմատներն ու պատգամները ճիշտ հասկանալու սկզբունքներ ներկայացնեցին:



Ուսուցիչների կողմից կրօնի դասերի ու դասագրքերի վերաբերեալ հարցումներ ուղղվեցին դասախսուներին, որոնց բաւարար պատասխաններ տրվեցին:

Բոլոր հանդիպումները տեսեցին առաւել քան մէկ եւ կէս ժամ, որոնց ներկայ էին նաև Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, Կրթական եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդների ներկայացուցիչները:



Կիրակի՝ դեկտեմբերի 20-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, թեմակալ առաջնորդի նախագահութեամբ խորհրդակցական նիստ գումարուեց հրավիրեալ մասնագէտների եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի անդամների միջեւ, որտեղ քննարկեցին բարձր դասարանների կրօնի դասագրքերի պատրաստման հարցը, ճշտեցին ուղղութիւններ եւ բովանդակութեան ընդհանուր շրջագիծ: Աշխատանքը զարգանալու է համադրաբար:

## ԻՐԱՆԻ ԱՍՏՐԱՖԻԶԻԿԱՅԻ ՄԱՅՐ ԴԿՏՐ. ԱԼԵՆՈՒՇ ՏԵՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԽՈՐ ԶՈՒՂԱՅԻ «ՔԱՆԱԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒԽ

Երկուշաբթի՝ 2015 թականի նոյեմբերի 9-ի առաւտեան, Նոր Զուղայի հայոց ազգ կատարած ամալիդի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, նախաձեռնութեամբ «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի տնօրինութեան ու մասնակցութեամբ դպրոցի ուսուցչական կազմի, աշակերտութիւնների եւ իրենց ծնողների տեղի ունեցած գիտական թեմայով բանախոսական հանդիպում:



Իրանի աստղաֆիզիկայի մայր, դոկտ. Ալենուշ Տէրեանի ծննդեան 95-ամեակին նիւրիած այս ծրագրի բացումը կատարեց դպրոցի տարրալուծարանի պատախանատու Սինէ Մինասեանի միջոցով, ով ներկայացնելով յոթելեարի կենսագրականը, հրաիրեց Իրանի առաջին հեռադիտակի կառուցման ծրագրի տնօրէն, ճարտարագէտ Մոռադիին՝ բանախոսելու:

Ճարտարագէտի բանախոսութեան խորագիրն էր «Ծանօթանալ աշխարհին»: Նա սկզբում անդրադարձաւ Երկիր

մոլորակին ապա թեման ընդարձակեց, բացատրութեամբ հանդէս գալով տիեզերքի տարբեր բաժինների մասին՝ ինչպիսին են Արեգակնային համակարգը, Ծիր կաթինը եւ...

Պրն. Մոռադին իր ելոյթն առաւել գրաիչ դարձեց խօսքին զուգահեռ ցուցադրուող պատկերների ու հետաքրքրաշարժ տեսանիւթերի միջոցով: Նա բացատրութիւններ տես նաև աստղագիտութեան ոլորտում օգտագործուող մի շարք տերմինների մասին՝ կարեւորութեամբ ընդգծելով այն փաստը, որ մարդ արարածն այս ընդարձակ գիտութեան դիմաց չի յուսահատել եւ օրըստորէ աշխատել է առաւել զարգանալ այս բնագաւառում:



Նա իր խօսքի մի այլ բաժնում դիմելով սրահում ներկայ աշակերտութեանն ասաց. «Երկիր մոլորակի ու աշխարհի վերաբերեալ բազմաթիւ մուլթ կէտեր կան, որոնք դեռ պէտք է բացայացւեն եւ հնարաւոր է դուք լինէք ապագայ այն գիտնականների շարքում, ովքեր բացայացելու են դրանք»:

Վերջում բանախոսն ակնարկ ունենալով Ալենուշ Տէրեանի կեանքին ու գործունէութեանը՝ ծրագիրը եզրափակեց յոթելեարին նիւրիած մի տեսանիւթով:

## ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱԱՆԵԱՆ» ԱՊՀԿԱԱՑ ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՏՂԱՅՈՑ ՄԻԶԱԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐՔԻ ԱՄԵՆԱՍԵԱՅ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌ



Ուրբաթ՝ նոյեմբերի 20-ի երեկոյեան, Նոր Զուղայի հայոց ազգային կատարած ամալիդի կենտրոնական սրահում, տեղի ունեցած հայոց ազգային «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների գորի ամենամեայ ցուցահանդէս-վաճառքի բացման արարողութիւնը: Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը, Չահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգէ. Տ. Անանիա Վրդ. Գումանեանը, ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներ, «Ուկեղ-

շիւրի տիրակալները» գրքի թարգմանիչ Յարութ Նազարեանը, ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ ու համայնքի անդամներ:



Ցուցահանդեսը, որն արդասիքն էր զոյք դպրոցների տեսչութիւնների, ուսուցական կազմերի, ծնողական խորհուրդների եւ գրադարանավարութու ջերմեռանդ աշխատանքի, բացած յայտարարւեց գրադարանավարուիի Կարին Տէր-Մարտիրոսեանի խօսքով, ուր անդրադարձ կար գրքի եւ ընթերցանութեան կարեւութեանը եւ մերօրեայ պայմաններում ընթերցանութեան պակասի ճգնաժամին: Այնուհետեւ ներկաներին առիթ ընձեռւեց շրջելով դահլիճնում, մօտկից ծանօթանալ ըստ թեմաների եւ տարիքային խմբաւորումների առանձնացած կրպակներում ցուցադրուած գրքերին:



Ընթացքում տեղի ունեցաւ նաեւ գրքի ծանօթացում, որտեղ նախ ուսուցչուի Քառողին Դիլանչեանը ներկաներին ծանօթացրեց 7-րդ դասարանի աշակերտութեան համար հրատարակած գունազարդ եւ բովանդակալից «Հայոց լեզու եւ գրականութիւն» գիրքը՝ իր աշխատանքային տետրով: Սոյն գիրքը կազմել է Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ, ուսուցչուիներ Ռիմա Սիմոնեանի, Սեդա Դիլանչեանի եւ Քառողին Դիլանչեանի միջոցով եւ լեզարան Դաւիթ Գիրչինեանի խմբագրութեամբ: Տէս. Քառողին Դիլանչեանը ներկաներին ծանօթացրեց գրքի ստեղծման մուայլացումից մինչեւ հրատարակութիւնը կատարած աշխատանքներին, նաեւ բժախնդրուեն ընտրած բաժիններին եւ դրանց նպատակներին, որտեղ յատկապէս նկատի են առնելի համամարդկացին արժէքների փոխանցումը եւ հայրենասիրութիւնը: Նա նշեց, որ գրքերի վերապատրաստման գաղափարն առաջացաւ նկատի առնելով այն փաստը, որ մի շարք դասագրքեր չեն համապատասխանում աշակերտու-

թեան ներկայի հոգեբանութեանը: Այնուհետեւ տկն. Դիլանչեանը ներկայացրեց տարրական օղակի համար պատրաստած դիւրընբելի եւ գունազարդ կրօնի դասագրքերը, որից պատրաստման գործում իր անմիջական մասնակցութիւնն է ունեցել Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը:

Ապա ընթերցւեց Նուէլ Բարբրի (Noel Barber) հեղինակած «Ուկեղջիւրի տիրակալները» գրքի թարգմանիչ Յարութ Նազարեանի կենսագրականը, որից յետոյ թարգմանիչը հրատիրւեց խօսելու իր կատարած աշխատութեան մասին:



Նա սկզբում գնահատելով գրքի ցուցահանդէսի կազմակերպումը եւ անդրադառնալով գրքի անգլիացի հեղինակի կենսագրականը՝ նշեց, որ գիրքը պատկանում է Վաւերագրական գրականութեան շարքին եւ դրա պացոյցն է հեղինակի կողմից օգտագործած աղբիւներն ու վաւերագրերը, որոնք ներկայացւել են գրքի վերջում եւ դրանց շնորհի այն դարձել է պատմական տեղեկագիր: Թարգմանիչը բացատրեց, որ սկզբում իրեն հետաքրքրել է գրքի բովանդակութիւնը, ապա այն, որ գրքում ներկայացւում է թուրքի իսկական նկարագիրը եւ ապացուցում է արեւմտեան պետութիւնների նենգ քաղաքականութիւնը: Պրն. Նազարեանը ներկաներին ծանօթացնելով գրքի բովանդակութեանը եւ գրքի մասին իր վերլուծութիւններին՝ մէշբերումներ կատարեց նաեւ ներկայի ու Թաղէաթի խօսքերից, որոնցով ինչպէս հեղինակ Նուէլ Բարբրն է վկայում, ապացուցում է Հայոց Յեղասպանութեան կանխամտածաւ ու ծրագրած լինելու փաստը:

Իսկ վերջում գերշ. Սրբազան Հօր ձեռամբ «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների ամբողջ անձնակազմի անունից յուշանէր շնորհիւց թարգմանիչ Յարութ Նազարեանին եւ գրքի շաբաթայ առիթով գնահատագրեր յանձննեցին համայնքի չորս գրադարանների պատասխանատուներին, որոնք են նոր Զուղայի հայոց ազգ. «Արմէն» երկսեռ կրթահամալիրի գրադարանավարուիի Այլիդա Ալեքսանդրեանը, «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների գրադարանավարուի Կարին Տէր-Մարտիրոսեանը, Ն. Զ. Հայ Մ. Ա. «Արարատ» միութեան գրադարանավարուիի Երանուշ Թահմազեանը եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու Վերգինէ Միրզահանեանը:

Գրքի ցուցահանդէս-վաճառքը շարունակւեց 7 օր:

## ՍԱՀՄԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ

Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի տեսչութիւնը եւ ծնողական խորհուրդը նոյն դպրոցի աշակերտական խորհրդի առաջարկով եւ նախաձեռնութեամբ թափանիս դեկտեմբերի 2, 3 եւ 4-ին կազմակերպել էր ճամբար՝ նիւրած «Սահմանը պաշտպանող հայ զինորին»:

Ճամբարի ուղղական ընտրել էր ի հետեւումն Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի կողմից յայտարարւած «Նսամակ՝ սահմանը պաշտպանող զինորին» շարադրութեան մրցոյթի՝ տղայոց դպրոցիս տղաներին հոգեմտաւոր եւ ֆիզիքա-

կան համապատասխան վարժանքներով ծանօթացնել հայ զինորին, նրա առօրեային, նրա խնդիրներին, ինչպէս նաև աշխատանոցներով եւ քննարկումներով ազգայինի ընկալման, հայրենասիրութեան եւ հայրենանիրումի դրսեւորումները տեսնել այսօրւայ հայ աշակերտի-հայ պատանու մէջ:

Ներկաներ.

Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեան, հոգք. Տ. Անանիա վորդ. Գումանեան, Կրօմական խորհրդի ատենապետ, Կրթական խորհրդի ներկայացուցիչ, Ծնողական խորհուրդ, տեսչութիւն



## ԱՄԱՆՈՐԻ ԽԱՆԴՎԱՌ ՀԵՏՔԵՐԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

Կասկած լինել չի կարող, թէ մանուկ-ներն ինչպիսի չերմեռանդ աշխատանքով են նախապատրաստում իրենց ամենասիրելի տօնին եւ սիրալի Զմեռ պապիկի այցելութեանը։ Նման մանկական խանդավառութեան եւ ամբոնչ աշխատանքի արգասիք կարելի է համարել Նոր Զուղայի հայոց ազգ մանկապարտեզ-նախակրթարանի սաների Ամանորեայ հաղէսը, որը տեղի ունեցաւ կիրակի՝ դեկտեմբերի 27-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում։ Ծրագիր, որտեղ արտացոլած էր ոչ միայն մանուկների աւելի քան մէկ ամիս շանափառք կատարած նախապատրաստական փորձերի արդինքը, այլեւ այն լայն աշխատանքը, որը ծավալել էր դպրոցի տեսչութեան, ուսուցական կազմի եւ Ծնողական խորհրդի միջոցով՝ աշակերտներին պատրաստելու եւ երեկոն կազմակերպելու առումով։



Տօնական ծեռնարկը, որտեղ որպէս հանդիսատես ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներն ու սաների հարազատները, բացւած յայտարարեց մանկապարտեզ-նախակրթարանի տեսչութիւն Քառովին Դիլանչեանի շերմ մալթանքներով ու շնորհաւորանքներով։ Տեսչութին նախատօնական իր սրտարովս խօսքում ցանկացաւ հին տարին իր հետ տանը բոլոր տիրութիւններն ու դժւարութիւնները, իսկ 2016-ը բերի անսահման երշանկութիւն բոլորի օշախներում։ Նա վերջում հայ ժողովրդին մալթելով նորանոր յաղթանակներ եւ համախմբածութիւն՝ յանուն վաղայ լուսաւոր ապագայի, կամեցաւ, որ մանուկների կեանքից ան-

պակաս լինեն՝ բարի հերիաթները, ժպիտը եւ քնքութիւնը։



Ծրագրում տեղ գտած գեղարևստական կատարումները յագեցած էին պարային շարժումներով, երգերով եւ արտասանութիւններով։ Մանկապարտեզի Մանուշակագոյն եւ Դեղին խմբակների ներկայացման սցենարը մշակել էր այնպէս, որ սկզբում Զմեռ պապիկն ու Զիւնանուշն այցելեցին խաղալիքների աշխարհ՝ մանուկների համար խաղալիք-ներներ ընտրելու։ Խաղալիքների տեսքով հանդերձաւրուծ դպրոցի ամենակրտսեր խմբակի՝ Մանուշակագոյնի սաները, պարեցին եւ արտասանեցին, իսկ վերջում ալեհեր պապիկն խնդրեցին իրենց տանի ու նիրի մանուկներին։ Շարունակութեան մէջ Զմեռ պապիկը ներկների պարկն ուսին հասնում է իրական աշխարհ, սակայն իր սպասածին հակառակ, քաղաքում չեն լինում տօնական պատրաստութիւն եւ տրամադրութիւն։ Քիչ անց պապիկի կանչին արձագանքելով բեմում ներկայանում են խոհարարները, փոստատարները, ներկարարներն ու ծաղկեվաճառները, ովքեր զարդարում են քաղաքը, պատրաստում թխածքեղէնը եւ բաժանում Ամանորեայ բացիկները։ Սոյն արարն իրականացնեց Դեղին խմբակի երեխաների միջոցով եւ նոյնպէս ողողած էր արտասանութեամբ ու պարով։ Մանկապարտեզի փոքր եւ մեծ խմբակների կատարումները եզրափակւեցին երգերից ու արտասանութիւններից բաղկացած գեղեցիկ փնջով։



Այնուհետեւ նախակրթարանը բեմականացրեց «Պապն ու շաղգամը», սակայն ոչ իր աւանդական ձեւով։ Ամբողջովին միւզիկլ ներկայացման ընթացքում աշակերտները երգով ու պարով հանդիսատեսին մատուցեցին աշխարհանշակ հերիաթից մի նոր պատկեր, որտեղ շաղգամը հողից դուրս հանեց, պապիկի, տատիկի, թոռնիկների, շնիկների, կատուների, մկների եւ ծիտիկների մի հսկայական բանակի համատեղ ջանքերի շնորհի։ Բեմում ներկայ ծաղկեներն ու այգեպանները նոյնպէս մարմնաւորնել էին նախակրթարանի սաների միջոցով։

Իւրաքանչիւր Շերկայացման աւարտին մանուկները Զմեռ պապիկից ստացան մրգեր:

Վերջում Շերկաները վայելեցին թեմակալ առաջնորդի հայրական պատգամը, ուր Սրբազն Հայրը մանուկների ուրախութիւնն ու վայելքը մեծահասակների ամենամեծ երշանկութիւնը համարելով՝ ծրագրի կազմակերպման համար՝ իր գնահատանքի խօսքն ուղղեց դպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին, Ծնողական խորհրդին ու բոլոր ծնողներին: Գերշ. Տ. Բարդէն արք. Զարեանն իր պատգամի շարունակութեան մէջ 2015 թականը հայ ժողովրդի համար անկիւնադարձին հանգրւան համարելով եւ մատնանշելով սոյն տարիայ ընթացքում թեմի եւ համահայկական մակարդակներով իրականացրած ծրագրեր՝ յատկապէս Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի շրջագծում իրագործած միջոցառումներն ու ձեռքբերումները՝ կոչ արեց, որ Նոր տարին դիմաւորելիս աղօթենք առ բարձեալն Աստիած՝ Շեղութեան եւ դժւարութեան մէջ գտնուղների ու աշխարհում յափնենական խաղաղութիւն

հաստատելու համար: Թեմակալ առաջնորդն իր խօսքն աւարտեց համայնքին կայունութիւն եւ միասնականութիւն մաղթելով:



Այս գունագեղ տօնն աւելի տպարորիչ դարձնելու նպատակով, ամենամեայ կարգով մանկապարտէզ-նախակրթարանի պատասխանատուների միջոցով կազմակերպում են եւս երկու միջոցառումներ, որոնցից մէկը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ դեկտեմբերի 22-ին, դպրոցի շրջափակում, ուր «Նախօրեակ» անան ներքոյ իրականացրած ջերմ եւ մտերմիկ տօնախմբութեան ընթացքում, սաներն առիթ ունեցան Զմեռ պապիկի Շերկայութեամբ իրենց խանդավառութիւնն ու տօնական տրամադրութիւնը բազմապատկելու, իսկ միան իրականացրեց հինգշաբթի՝ դեկտեմբերի 24-ին, «Արարատ» միութեան սրահում, որտեղ համայնքի ժողովրդի եւ յատկապէս փոքրիկների յուշերում երեկոյեան դաշտահանդէսը յաւերժացաւ՝ անուշաբյու ուտեստներ ճաշակելով, զլարմալի խաղերով ինչու չնաեւ գեղեցիկ ու իւրօրինակ յարդարած բեմում Զմեռ պապիկի հետ լուսանկարուելով:



## ԱՇԽԱՏԱՅԻՆ ՎԱՃԱՌ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Կազմակերպութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երեցների միաւորի, ուրբաթ՝ նոյեմբերի 13-ին, սկսեալ ժամը 16:00-ից միութեան հանդիսութիւնների դահլիճում հերթական անգամ տեղի ունեցաւ աշնանային վաճառք, որտեղ ի շահ միութեան վաճառքի էին հանել աշնանային մրգերից ու բանջարեղջներից պատրաստած եւ գեղեցիկ փաթեթաւորած թթւեղէն, քացախեղէն, մրգանուշ, ճթնի եւ այլ պահածոներ, որոնց բազմազանութիւնը վկայում էր միութեան երեց-

ների միաւորի վարչութեան ու ամբողջ անձնակա զմի շա-բաթների ու ամիսների համատեղ եւ արդինաւէտ ջանքերի մասին: Վաճառքից բացի՝ միաւորը բազմահարիւր այցելուներին մատուցեց աւանդական ճաշեր ու այլ ուտեստներ: Վաճառքին մասնակցել էին նաեւ Նոր Զուղայի Փերիոյ Կրթասիրաց միութիւնը եւ Հայութեաց Բարեգործական ընկերութիւնը, որոնք նոյնական պահածոների ու թխածքների տեսքով վաճառքի էին համել իրենց միասնական եւ բարեգործական հիմունքների վոյա կատարած աշխատանքի արդիւնքը: Միաւորը վաճառքին մասնակցելու առիթ էր ստեղծել նաեւ ցանկացող անհատների համար, որին արձագանքել էին Ծահինշահրից անհատներ:

Դահլիճում, աշնան եղանակին յատուկ գեղեցիկ յարդարանքի կողքին, ուշագրաւ էր նաեւ «Անմոռուկ» խորհրդանիշ ծաղկով զարդարած անհատ մասնակցի սեղանն ու պահածոների փաթեթաւորումը, որ փոխանցում էր իրեն յատուկ պատգամը...



## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ի ՅԻՇԱՏԱԿ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵԶԵՑԵԱԼ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հիմնադրման 60-ամեակի յորելենական ձեռնարկների շարանում, ուրբաթ՝ նոյեմբերի 20-ի առաւոտեան ժամը 10-ին, Նոր Զուղայի Հայոց ազգ գերեզմանատանը տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ միութեան նշանական դեր են ունեցել միութենականների, ովքեր նշանակալի դեր են ունեցել միութեան կեանքի վերելի ուղղութեամբ:



Գլխաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի եւ մասնակցութեամբ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վլր. Գուճանեանի, հոգեւորականաց եւ դպրաց դասերի ու միութեան Ակադեմիան միաւորի Արի-արենուշական հատւածից կազմած դրօշակակիր խմբի, Հոգեհանգստեան արարողութիւնը կատարեց միութեան վաստակաւոր վարչական անդամ Յակոբ Յարութիւնեանի յուշաքարի առջեւ եւ նշանական միութենականների պատկերների ներքոյ: Ապա Միութեան 60-ամեակի յորելենական յանձնախմբի խօսքն ընթերցեց Մանիա Դուկասեանը, որից յետոյ ներկաները խունկ ծխեցին նշանական հոգիների խաղաղութեան համար:



Արարողութեանը ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները, Հայ դաստի յանձնախմբի ներկայացուցիչը, միութեան եւ Շահինշահրի մասնաճիւղի վարչական անդամները, Յորելենական յանձնախմբի անձնակազմը, միութեան Ակադեմիան միաւորի Արի-արենուշական հատւածների եւ Երէց փաղանգի գգես-

տաւորած անդամները, նշանական միութենականների ընտանիքի անդամները եւ միութենականներ:



Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ՝ միութեան սրահում տեղի ունեցաւ ընդունելութիւն, որտեղ թեմակալ առաջնորդ Սրբազն Հայրը հայրական իր խօսքում նախ գնահատանքի խօսք ուղղեց Միութեան Կենտրոնական վարչութեանը եւ 60-ամեակի Յորելենական յանձնախմբին՝ հոգեհանգստեան արարողութիւնը կազմակերպելու համար եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ մեծ թուվ միութենականներ մասնակից եղան արարողութեանը եւ յայտնեց, այսօր երբ «Արարատ» միութիւնը տօնում է իր 60-ամեակը եւ ներկայանում է իր հարուստ անցեալով, նոյն խանճավառութեամբ եւ վարչական անդամների ու միութենականների նոյն անսակարկ նիւրումով շարունակում է իր երթը:



Թեմակալ առաջնորդը նաեւ կարեւորեց միութեան դերը մարզա-մշակութային ոլորտում առողջ սերունդ դաստիարակելու առումով: Վերջում Աստծուց հայցեց, որ ննշեցեալ միութենականների հոգիներին խաղաղութիւն պարգևեի ու Օրանց երկնային լուսեղէն պատկին արժանացնի, իսկ ներկայում աշխատող միութենականներին օրինեց եւ ուժ ու կորով մաղթեց Օրանց, որպէսզի շարունակեն այս նիւրական առաքելութիւնը՝ ի խնդիր թեմի զաւակների առողջ դաստիարակութեան: Սրբազն Հայրն իր եղոյթը եզրափակեց աղօթքով:

Նշելի է, որ ծրագիրը վայելում էր թեմակալ առաջնորդ Սրբազն Հօր հովանաւորութիւնը:

«ԿՈՌԻՆԿ» ՀԱՄՈՅԹԻ ՏԱՐԵԿԱԼԻ ԵԼՈՅԹԸ՝  
ՆԻՒՐԻԱԾ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱԼ 60-ԱՄԵԱԿԻՆ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հիմնադրման եւ գործունելութեան 60-ամեակի նշման ձեռնարկների շրջանակում, հինգշաբթի՝ դեկտեմբերի 3-ի երեկոյեան նոյն միութեան բեմում տարեկան ձեռնարկով հանդէս եկաւ միութեան Մշակութային միաւորի «Կոռոնկ» համոյշը, ղեկավարութեամբ պարուսոյ Յակոբ Մարգարեանի եւ ասմունքի խմբի պատասխանատու Ռիմա Սիմոնեանի, համագործակցութեամբ պարի փորձավար Քրիստինէ Յակոբուսի:



Ներկաներին ողջունեց միութեան Մշակութային միաւորի վարչութեան նախագահ՝ Քարմէն Ղեւեանը, ով հակիրճ տողերով անդրադարձաւ երկրում եւ արտերկրում խմբի իրականացրած համերգներին, որոնք արժանացել են հանդիսատեսի բուռն գնահատանքին։ Ապա թեմը տրամադրեց «Կոռունկ»-ին։ Խումբը երեք տարիքային խմբերով հանդէս եկաւ 15 պարային համարներով, որոնց մեկնարկը «Զարթօնք» պարն էր, որին յաջորդեցին «Գողթանի», «Հանինօ», «Կարապ-ներ», «Շատախի», «Շիրակի», «Սեւանի», «Յունական», «Տօնական» եւ այլ պարերը։



Ծրագրի ընթացքում ասմունքի խմբի անդամութիւներ՝ Թալին Մովսիսեանը եւ Լալագէ Խաղողկեանը ասմունքեցին Սալեաթ Նովայի «Ես քու դիմէթք չեմ գիտի»

Եւ Վահան Տէրեանի «Կարուսել» ստեղծագործութիւններից հատվածներ, որոնց շարունակութիւնը հանդիսացաւ Վանա Շիրամեանի կատարմամբ, նոյն ստեղծագործութիւնների հիման վրայ ստեղծած երգերը, իսկ Թամանա Մինասեանը ասմունքեց Սիլլա Կապուտիկեանի «Ընդդիմախօսութիւն» բանաստեղծութիւնը:



Ուշագրաւ Էր Շաել բազմազան շարժումներով մանկական «Լիդուշիկ» պարը, ինչը երեխաների միջոցով ներկայացւեց անթերի եւ հանդիսատեսի մօտ ստեղծեց առանձնակի խանդավառութիւն:

Համերգն ամփոփվեց «Հզօր Հպատակն» երգի ներքյան՝ պարախմբի անդամների միասնական պարով, որոնց միացան բոլոր մասնակիցները:



Երեկոյի իրականացման առթիւ Մշակութային միաւորի վարչութեան նախագահը շնորհակալական խօսք ուղղեց բոլոր մասնակիցներին, դեկավարներին եւ Կենտրոնական վարչութեան:



Մատուցած գեղեցիկ, անթերի եւ պատգամներով լեցուն երեկոյի եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Սպահանի Հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանը, ով գնահատելով երեկոյի կազմակերպումը, դրատեց համոյթի անդամութիների միջոցով իրականացած երեկոն եւ ինչպէս միշտ կոչ արեց տղաներին, որպէսզի մասնակից լինեն պարախմբի աշխա-

տանքներին, նշելով, որ տղամերը միշտ պիտի աղջիկների կողքին լինեն, որպէսզի միասնաբար դառնան հզօր բանակ եւ առաւել հզօրացնեն ու պայծառացնեն համայնքը: Թեմակալ առաջնորդը գնահատելով միութեան պատասխանատուներին եւ համոյթի ղեկավարներին, առանձնայատուկ գնահատանքի խօսք ուղղեց փոքրիկ պարողներին, իսկ շարունակութեան մէջ ուրախութեամբ ու հապատութեամբ անդրադարձաւ երեկոն «Արարատ» միութեան հիմնադրման 60-ամեակին նիւրած լինելու իրողութեանը եւ իր յարգանքը մատուցեց հիմնադրի ղեկավարներին ու ներկայում աշխատող միութեանականներին:

Սրբազն հայրն իր արտայայտութիւնների աւարտին իր ուրախութիւնը եւ հապատութիւնը յայտնեց կազմակերպած բազմաթիւ ձեռնարկների արդիւնքում համայնքում տիրող աշխուժութեան եւ կենսունակութեան կապակցութեամբ:



Նշելի է, որ իրականացած համերգը մեծ հետաքրքրութեամբ ընդունվեց սրահում լեփ-լեցուն հանդիսատեսի կողմից:

## ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՇԴԻՍՈՒԹԻՒՆ՝ Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Ուրբաթ՝ դեկտեմբերի 4-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում համախմբել էին նախորդ շրջանների Կենտրոնական վարչութեան անդամները, ներկայում աշխատող միութեանականներն ու հիւրե՞ր՝ միասնաբար նշելու միութեան հիմնադրման եւ գործունեութեան 60-րդ տարեդարձը:



Հանդիսութիւնը կազմակերպել էր Միութեան 60-ամեակի Յորելենական յանձնախումբը, որի անունից ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ Մանիա Ղուկասեանը, այնուհետև հակիրճ կերպով գեկուցեց Յորելենական յանձնախմբի միջոցով իրականացած միջոցառումների եւ յառաջիկայում կայանալիք ծրագրերի մասին:

Միութեան Կենտրոնական վարչութեան խօսքն ըն-

թերցեց Միգանուշ Տէր Մարտիրոսեանը, որում շնորհաւորի եւ Յորելենական յանձնախմբին ուղղած շնորհակալական խօսքերի կողքին, մասնաւորապէս նշանակած էր հայապահպանման գաղափարախօսութեան այն կարեւոր կետերը, որոնք առանցքային դեր եւ նշանակութիւն են ունեցել սիհութով միութիւններ հիմնադրելու ուղղութեամբ եւ այդ առումով ընդգծած էր վեց տասնամեակների ընթացքում միութեանականների անշահանների համագործակցութեան շնորհիւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան ծառալած բեղուն գործունեութեան մասին:



Ցուցիչ էր պահը, երբ երաժշտութեան եւ ճառագայթող լոյսերի ներքոյ ոտքի ելան ներկաներն ու ծափողներով հետեւեցին յորելեար միութեան 60-ամեակի տորթը կտրելուն, որի պատիւը տրիած էր միութեան



Կենտրոնական վարչութեան նախագահ Մասիս Մինասեանին, Յորելենական յանձնախմբի ներկայացուցիչ Վարդուշ Զարգարեանին եւ մարզա-մշակութային ասպարէզում վաստակաւոր միութենականներ Այլին Մելիքեանին ու Ռիմա Միմոնեանին, որին միացան Կենտրոնական վարչութեան եւ Յանձնախմբի անձնա-

կազմն ու միաւորմերի վարչակազմները, որից յևոյ շնորհաւորական ելոյթներով հանդէս եկան միութեան միաւորմերի ու Շահինշահրի մասնաճիւղի ներկայացուցիչները:



Ընթացքում խօսքը տրւեց նաև նախորդ շրջանների Կենտրոնական վարչութիւնների անդամներին եւ միութենականներին:

Երեկոյթի երգ-երաժշտութիւնը ապահովեցին «Անի» խումբը եւ անհատ կատարողներ:



### Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԲՈՒՆԵՐ ԵՐԵԿՈՅ

Նոր Զուղայի Հայ Մարզա-մշակութային «Արարատ» Միութեան հիմնադրման եւ գործունեութեան 60-ամեակի յորելենական ձեռնարկները ամփոփուեց, հինգշաբթի՝ դեկտեմբերի 17-ին գեղարվեստական յայտագրով:




Երեկոյի բացումը կատարւեց «Զօն Արարատ միութեան 60 ամեակին» երգով, ապա որպէս միութեան ննջեցեալ հիմնադիրների ու միութենականների յիշատակի յարգանք հնչեց Ե. Շարենցի «Յիշատակը Ձեր անցած օրերի արձագանքն է» բանաստեղծութեան յուզիչ կատարումը, որին յաջորդեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանի ողջոյնի խօսքը:



Յաջորդիւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն

արք. Զարեանը ընթերցեց Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Ս. Արամ Ա Վեհափառ Հայրապետի օրինութեան գիրը՝ միութեան 60-ամեակի առթիւ: Նոյն առիթով Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի օրինութեան եւ գնահատանքի գիրը ընթերցեց Շահինշահր քաղաքի հոգենոր տեսուչ՝ հոգք. Տ. Անանիա վլրդ. Գումանեանը:



Շնորհաւորական ուղերձ էին յղել նաև Թեմիրանի եւ Աստրապատականի Հայոց Թեմների հոգենոր առաջնորդները, Շահինշահրի հոգենոր տեսուչը, իսլ. խորհրդանարում զոյգ պատգամաւորները, Հայ դատի շրջանիս յանձնախմբը, «Ալիք» օրաթերթի տնօրինութիւնը եւ խմբագրական կազմը, միութեանս արտօնատէր Թաթուլ Օհանեանը Թեմիրա-

Այս նոր Զուլայի, եւ Շահինշահրի ազգային մարմինները եւ ենթամարմինները, կազմակերպութիւնները, միութիւնները եւ նոր Զուլայի Հայոց ազգային դպրոցները, որոնցից ընթերցւեցին հատւածներ:




Գեղարվեստական բաժնում հնչեցին երաժշտական հեղինակային կենդանի կատարումներ, երգեր, իրովի մօտեցումներով Շերկայացումներ եւ ազգային պարեր՝ միութեան Մշակութային միաւորի խմբերի եւ անցեալի միութենականների միջոցով:



Երեկոյի աւարտին խօսքը տրւեց Թերիանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արք. Սարգսեանին: Սրբազն Հայոն նախ իր անհուն ուրախութիւնը յայտնեց կազմակերպած հանդիսութեանը ներկայ լինելու կապակցութեամբ եւ ասաց, որ մեր ժողովորդի գոյապայքարի եւ պահանջատիրական երթի ընթացքը միշտ իրագործում է նայելով դեպի վեր, դեպի հայ ժողովորդի յաւերժութեան խորհրդանիշ՝ Արարտին եւ պատահական չէ որ «Արարատ» անունով է կնքած մեր միութիւնները: Շարունակութեան մէջ նշեց. «Որեւէ միութիւն արժեւորում է ազգին, հայրենիքին եւ եկեղեցուն ներդրած ծառայութեամբ, յատկապէս այս օրերում երբ աշխարհում ականատես ենք ամէն վայրկեան վճռորոշ դէպէրի ու ճակատագրական պատահարների, պիտի պատարաստ լինենք արարտատանձան հաւատքով ու կեցւածքով դիմագրաւելու առկայ մարտահրաւէրներն ու խոչընդոտները. այս է պահանջում այսօրւայ յորեկենական հանդիսութիւնը.... Թող Աստւած անսասան պահէ Արարատի ընտանիքը, մեր ժողովորդն ու հայրենիքը, որպէսզի դրանով զօրացած կարողանանք նաեւ մեր ներդրումը բերել համայն աշխարհին եւ խաղաղութեան հաստատմանը»:

Երեկոյի եզրակակիչ խօսքում Թեմակալ առաջնորդ Սրբազն Հայոը եւս իր ուրախութիւնը յայտնեց հրաշալի եւ անզուգական երեկոյի կապակցութեամբ եւ ասաց. «Ամեակները սովորական պահեր չեն, առիթներ են, որ մենք անդրադառնանք եղածի անցեալին ու

ներկային, որպէսզի կարողանանք նայել վաղաւան: Արարատը եւ մեր բոլոր կառոյցները պարտականութիւններ ունեն մեր ժողովորդի հանդէպ: բաւ չէ միայն անցեալով հպարտանալ պիտի քայլել առաջ, քայլել անվարան եւ յաղթական տօնախմբութիւն կատարել՝ այնպէս, ինչպէս վայել է մեր ժողովորդին»: Շարունակութեան մէջ ասաց. «Արարատը դպրոց է, այն 60 երկար տարիներ դաստիարակել է սերունդներ, որպէսզի պահապանը լինեն մեր սրբութիւնների ու արդար իրաւունքների»: Գերշ. Սրբազն Հայոը նաեւ յոբեկնական ձեռնարկի կապակցութեամբ գնահատանքի խօսք ուղղեց կենտրոնական վարչութեանը, Յորբեկնական յանձնախմբին, գեղարվեստական բաժնի պատասխանատուներին ու մասնակիցներին եւ բարի երթ ու նորանոր յաջողութիւններ մաղթեց նրանց:



Յատկանշելի է, որ երեկոն առաջնորդում էր միութեան պատմականը ներկայացնող մէջքերումներով:

Երեկոյի աւարտին ներկաները այցելեցին կից սրահում կազմակերպած միութեան անցեալն ու ներկան ներկայացնող լուսանկարների, հրատարակութիւնների, որմազդերի, մեդալների, գաւաթների ու յուշաներների ցուցահանդէսից: Այնուհետեւ ի պատի պաշտօնական հրաւիրեալների տեղի ունեցաւ ընդունութիւն եւ յուշամեդալների յանձնում:

Երեկոյին ներկայ էին՝ Հայաստանից, Լիբանանից, Թեհրանից եւ նոր Զուլայից ու Շահինշահրից պաշտօնական հրաւիրեալներ, անցեալի ու ներկայ միութենականներ եւ հոծ թուվ այլ հանդիսատես:



Գեղարքունիքի յայտագիրը ներկայացւեց հետեւեալ կարգով.

- «Զօն Արարատ միութեան 60-ամեակին» երգի կատարում՝ Արքին Քեշիշեան, ձանակցութեամբ Զարեհնուշ Աղութեանի եւ Անասիկ Յովսէփեանի: Երաժշտութիւն՝ դոկտ.Արքի Բարումեանի
- «Կառուզօ»՝ Սաքտոնահար՝ Ասպետ Սիմոնեան
- Ե. Շարենցի «Յիշատակը Ձեր անցած օրերի արձագանքն է» ասմունքի կատարում՝ Ոիմա Սիմոնեան
- Ուղերձների ընթերցում՝ Լեռնիկ Ծատուրեան, Մանիա Ղուկասեան եւ Արքին Մուլրադեան
- «Իմ եղէգ» եւ «Աշուն» երգերի կատարում՝ Նոր Զուղայի երգչուիի (այժմ թեմբանաբնակ) Օֆիկ Մելիքեան. ընկերակցութեամբ երաժշտ-դաշնակահար Համիկ Ալեքսանդրեանի
- «Մանկական եռանդ» եւ «կեանքի անցում» դաշնամուրային կատարում՝ Համիկ Ալեքսանդրեան



- «Կոռունկ» ասմունքի խմբի ողջոյնի ելոյթ՝ «Միութիւնը տունն է մեր» խօսքի բեմականացում մասնակցութեամբ Կարին Տէր-Մարտիրոսեանի, Լեռնիկ Ծատուրեանի, Մանիա Ղուկասեանի եւ Ալինա Տէր.Սուլիհասեանի, բնագրի հեղինակ՝ իրանահայ անանի բանաս-

տեղծ Վարանդ եւ «Կոռունկ» ասմունքի խմբի ղեկավար Ոիմա Սիմոնեան

- «Հանինօ», «Շատախի» եւ «Տօնական» պարային համարներ «Կոռունկ» պարախումբի կատարմամբ:

- «Լեռն Շանթ» թատերախմբի օջոյցի ելոյթ, Յ. Թումանեանի «Մի կաթիլ մեղր» հեքիաթի բեմականացում՝ մենակատար Վիգեն Մովսիսեան

- «Սիրոյ երեկոյ» եւ «Հապտերիկ» երգերի կատարում՝ Կարին Օհանեան ընկերակցութեամբ՝ Քրիստինէ Յակոբեանի եւ Սեւադա Խաչիկեանի գուգապարով

- Հանդիսավար՝ Կարին Տէր-Մարտիրոսեան

- Պարուսոյ՝ Յակոբ Մարգարեան

- Գեղարքունիքի ղեկավարներ՝ Ոիմա Սիմոնեան եւ Կարին Տէր-Մարտիրոսեան

- Պարախումբ՝ Նարէ Ասատրեան, Անի Ասատրեան, Նազէ Ասատրեան, Աւենիա Բաղրամեան, Վանէ Խաղովեան, Սարինէ Խուդաբախչեան, Սելինէ Խուդաբախչեան, Նարէ Մարկոսեան, Վանէ Մինասեան, Քրիստինէ Յակոբեան, Սիրու Շահիջանեան եւ Ալինա Տէր-Սուլիհասեան

- Բեմայարդար Նայիրի Այլազեան եւ Ռազմիկ Նազարեան

- Թեմատիկ պատկերների պատրաստում եւ էկրանաւորում Վերգինէ Միրզախանեան եւ Նարինէ Տէր-Գրիգորեան

- Որմազդ եւ Յայտագիր՝ Նայիրի Այլազեան

- Հնչինային պատասխանատու՝ Ասպետ Սիմոնեան եւ Սեւադա Խաչիկեան

- Ցորելենական յանձնախումբ՝ Վարդիկ Զարգարեան, Արսինէ Մանսուրեան, Մանիա Ղուկասեան, Հրաչ Տէր-Յովհաննիսեան, Դիմիթրի Յովհաննիսեան, Գելիկ Խաչատրեան, Անդրէ Քալանթար-Օհանեան եւ Արքին Վարդանեան

## Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿԵ ԱՄՓՈՓԻԵՑ ՅՈՒՇԱՍԵԴԱԼՆԵՐԻ ՅԱՆՁՆՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՍՐ

Ուրբաթ՝ դեկտեմբերի 17-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան 60-ամեակի բուն երեկոյի աւարտին, տեղի ունեցաւ ընդունելութիւն:

Ցորելեար միութեան կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը ողջունելով հրաւիրեալներին, շնորհակալական խօսք ուղղեց բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իրականացաւ յորելենական ձեռնարկների շարանը, նաև շնորհակալական խօսք ասաց ուղերձ յլած բոլոր անհատներին, կազմակերպութիւններին, հաստատութիւններին, միութիւններին ու դպրոցներին, ինչպէս նաև նրանց, ովքեր մեծ ներդրում են ունեցել

«Արարատ» միութեան վերելքին ու սատար են հանդիսացել նրա աշխատանքներին:

Այնուհետեւ ծրագրի հանդիսավար Մանիա Ղուկասեանը հրավիրեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Չարեանին՝ ստանալու եւ Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ո.Օ.Ս.Ս. Արամ Ա Վեհափառ Հայոց պետին փոխանցելու նորին Սրբութեանը նիւրուած միութեան 60-ամեակի խորհրդանշական յուշամեդալը: Պրեմ Մինասեանը յուշամեդալ յանձնեց նաև իրանահայ երեք թեմերի հոգեւոր առաջնորդներին, Խալ. խորհրդարանում զոյգ պատգամաւորներին, ազգային մարմիններին ու ենթամարմիններին, Հայ դասի յանձնախմբին, միութիւններին ու կազմակերպութիւններին, «Ալիք» օրաթերթի տնօրինութեանը եւ խմբագրական կազմին, Նոր Զուղայի դպրոցներին եւ միութեան միաւորների ու Շահինշահրի մասնաճիւղի ներկայացուցիչներին եւ անհատներին:

Յուշամեդալը յանձնեց նաև իրանահայ երեք թեմերի հոգեւոր առաջնորդներին, Խալ. խորհրդարանում զոյգ պատգամաւորներին, ազգային մարմիններին ու ենթամարմիններին, Հայ դասի յանձնախմբին, միութիւններին ու կազմակերպութիւններին, «Ալիք» օրաթերթի տնօրինութեանը եւ խմբագրական կազմին, Նոր Զուղայի դպրոցներին եւ միութեան միաւորների ու Շահինշահրի մասնաճիւղի ներկայացուցիչներին եւ անհատներին:



## ՆՈՐ ՏԱՐԻԱՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ՎԱՃԱՐ-ՏՈՆԱՀԱՆԴԵՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՅՈՒՄ



Կազմակերպութեամբ Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան, ուղբաթ՝ դեկտեմբերի 18-ին, ժամը

10:00-ից 22:00-ը, միութեան դահլիճում ներթական անգամ տեղի ունեցաւ վաճառք- տօնահանրէս, որին մասնակցել էին Նոր Զուղայի Հայութեաց բարեգործական ընկերութիւնը, Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղը, «ԱրմԷն» տարրական երկսեռ համալիրի աշակերտական խորհուրդը եւ անհատ մասնակիցներ:

«Արարատ» միութեան Երեցների եւ Սկաուտական միաւորները ապահովել էին բազմահարիւր այցելուների ժամանակակից համար:

ցը՝ Երեցների միաւորը ամբողջ օրը մատուցելով ուտեստներ ու ըմպելիքներ, իսկ Սկառտական միաւորը կազմակերպելով պլաքախաղ:



Կարեւոր է նշել, որ տօնավաճառին մասնակից միութիւնները բացի այն, որ վաճառքին եւ նախապատրաստական աշխատանքներին մասնակցել էին իրենց վարչական կազմերով ու ամբողջ անդամ-ութիւններով, ի շահ տևալ միութեան նվիրաբերել էին նաև անհատապէս պատրաստած թխածքներ եւ ձեռարթեստներ:

Տօնական էր մթնոլորտը. տօնական եր նաեւ միութեան շրջափակը, որը յարդարել էր միութեան նոր տարιայ հանդիսավորութեան կազմակերպիչ յանձնախումբը:



Այս կարգի իրականացւող ամենամեայ վաճառքը անհատներին առիթ է ընձեռում վաճառքի հանել հիմնականում նոր տարιայ յեմաներով շուկայական եւ ձեռարթեստի զարդեր ու իրեր, իսկ դրան զուգահեռ թխածքներ, անուշեղին եւ...

## Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՑ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԽՄԲԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ԻՐԱԼԻ ԱԿՈՒՄԲԱՅՆԻ Ա ԿԱՐԳԻ ԼԻԳԱՅԻ ՄՐՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

2015 թվականի նոյեմբերի 4-ից 6-ը, նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզարանում տեղի ունեցան կանաց բասկետբոլի երկրի ակումբային Ակարգի լիգայի առաջին շրջանի մրցութիւնները:



Մրցաշարին, որ կայացաւ «Արարատ» միութեան

մարզարանում, մասնակցել էին նախնական մրցութիւններից այս փուլն անցած նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւնը, «Քերմանի Հետարան», «Թեհրանի Նարսինա», «Թեհրանի Շահին» եւ «Սարիի Էսթեղլալ» առաջատար խմբերը: Խաղերի ընթացքում ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան օրինութաց բասկետբոլի խումբը թէեւ պարտութիւն կրեց «Թեհրանի Նարսինա»-ից, սակայն երկու յաղթանակ արձանագրեց «Քերմանի Հետարան» եւ «Սարիի Էսթեղլալ» մրցակիցների դէմ:

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան խմբի անդամներն էին Լուսինէ Ասատրեանը, Սելին Խոչամալը, Նինէլ Մարկոսեանը, Լուսինէ Սէթ-Աղայեանը, Անայիս Խոդաբերդեանը, Արիգա Փուլադեանը, Նարէ Կիրակոսեանը, Սարա Ներսիսեանը, Մարինէ Հայրապետեանը, Արծիկ Ղազարեանը, Մեղմիկ Հազարմալեանը, Նազելի Պողոսեանը, իսկ մարզին էր Սայիդէ Նեշաթին եւ պատասխանատուն՝ Ռիմա Պետրոսեանը:

\*\*\*

## Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԱՊՋԿԱՆՑ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԽՄԲԻ ԱՐՁԱԿԱԳՐԱԾ ՀԵՐԹԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան աղջկանց բասկետբոլի խումբը Սահիում կայացած լիգայի մրցութիւններում գրաւելով երկրորդ տեղը յաջողնել է անցնել Սուաբը լիգա:

Այդ յաղթանակը նշելու եւ արժեւորելու նպատակով չորեքշաբթի՝ դեկտեմբերի 23-ի երեկոյեան ժամը 8-ին, միութեան կենտրոնական վարչութիւնն ընդունեց բաս-

կետրողի խմբի անձնակազմին:

Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը Վարչութեան անունից շնորհաւորելով մարզկումիների նաճած ձեռքբերումը, իր ուրախութիւնը յայտնեց այդ կապակցութեամբ՝ այն համարելով միանական աշխատանքի արդինք եւ միութեան յաղթանակը եւս: Նա ուրախութեամբ եւ հպարտութեամբ

անդրադասաւ բասկետբոլի բնագաւառում տեղի ունեցող սերնդափոխութեանը եւ նշեց. «Երկրի մակարդակում «Արարատ»-ը միշտ փայլել է իր մարզիկ-ուժիների նւաճած յաղթանակներով, մասնաւորապէս բասկետբոլի բնագաւառում ունեցել է ակնառու մարզիկներ, ովքեր մեծ յաջողութիւններ են արձանագրել»:



Այսուհետեւ Կենտրոնական վարչութեան անդամ Ազին Մելիքեանը, որպէս վաստակաւոր բասկետբոլիստութի, իր հերթին շնորհաւորելով խմբի յաղթանակը, յայտնեց, որ այդ կարգի խաղերին մասնակցելը բնականաբար մեծ գումարներ է պահանջում, որի ուղղութեամբ մեծ ներդրում է կատարել Միութիւնը: Նա վստահեցրեց, որ այուհետ եւս նրանց թիկունքին են լի-

նելու Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնները եւ ոչ մի շանք չեն խնայելու յետագայ մրցութիւններին ապահովելու խմբի մասնակցութիւնը:



Խմբին ցուցաբերած համգործակցութեան եւ հովանաւորութեան առթիւ շնորհակալական խօսքով հանդէս եկան մարզումների պատասխանատու Տարօն Բաղումեանը, խմբի մարզիչն ու մարզութիներից մի քանիսը:

Կենտրոնական վարչութեան եւ Մարզական միաւորի վարչակազմի անունից խմբի անձնակազմը պարգևատրւեց գնահատագրերով եւ յուշանւերներով: Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ համեստ ընդունելութիւն:



## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԼԵԶԵՑԵԱԼՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Կիրակի՝ Յոյեմբերի 15-ի առաւոտեան, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն Ս. արք. Զարեանի եւ ծեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քինյ. Գալստանեանի, կիրակնօրեայ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցւեց Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, որին մասնակցում էին հոգէ. Տ. Արտակ վրդ. Արարեանը եւ դպրաց դասը: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Պատարագի ընթացքում թեմակալ առաջնորդ Սրբազն Հայոց Եերկաներին ուղղած իր քարոզում,

թմարան ումենալով Քրիստոսի «Ով որ ձեր մէջից փոքրագոյնն է, նա է մեծը» խօսքը, Տիրոջ պատգամը հետևեալ կերպ մեկնաբանեց. «Մարդիկի պէտք է անդրադառնան այս խօսքի կարեւորութեանը եւ այս խօսքով ապրեն: Այսօր յաճախ տեսնում ենք, որ մարդը մեծութիւնը տեսնում է փառքի, դիրքի, աթոռի, ուժի եւ հարստութեան մէջ: Քրիստոսը եկաւ յեղափոխելու մարդկանց մտածողութիւնը եւ ասելու, որ մեծութիւնը մարդկանց խոնարհութեան, ծառայութեան եւ նւիրումի մէջ է: Երբեմն մարդը փորձում է միւսների աչքին բարձրանալ, սակայն ինչպէս Քրիստոսն է ասել նա, ով իր անձը կը բարձրացնի պիտի խոնարհէի, իսկ նա, ով իր անձը խոնարհեցնի, պիտի բարձրանայ»: Քարոզի մի այլ բաժնում գերշ. Սրբազն Հայրն ակնարկելով աշխարհում տեղի ունեցող վերջին ոճրագործութիւններին, դատապարտեց դրանք՝ Բարձրեալից հոգու խաղաղութիւն խնդրելով զրիածների համար: Գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանն իր խօսքի աւարտին դրատանքով արտապայտուեց Հայ կանանց գթութեան միութեան հիմնադրման նպատակների եւ 100-ամեաց ծառապայտուեան մասին:



Յաւարու սուրբ Պատարագի, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութեան միութեան հիմնադրման 100-ամեակի աղիթով տեղի ունեցած Հոգեհանգստեան արարողութիւն ի յիշատակ նոյն միութեան ննջեցեալ հիմնադրների, անդամութիների ու բարերարների, եւ նրանց հոգիների խաղաղութեան համար:



Արարողութեան աւարտին Հայ կանանց գթութեան միութեան կազմակերպութեամբ, եկեղեցու սրահում տեղի ունեցած հիւրադարձութիւն, որի ընթացքում արտայատուեց միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը: Նա անդրադառնալով միութեան հիմնադրման գաղափարներին եւ հիմնադրի սերնդի ու բարերար անդամութիների կողմից ծաւալած մարդասիրական եւ հայրենասիրական լայն գործունեութեանը՝ ընդգծեց. «Այսօր, մենք՝ կանանց գթութեան միութեան անդամուհիներս, մեր ուխտը վերանորոգելով՝ հաւասարացնում ենք բոլորիդ, որ կառչած ենք մնալու միութեանս հիմնադրի սերնդի սրբագան գաղափարին ու շարունակելու ենք նրանց երթը, որպէսզի նրանց արժանի գաւակները կոչւենք»:

Վերջում Սրբազն Հայրն իր հայրական օրինանքը փոխանցեց միութեան անդամութիներին, ապա միջոցառումն աւարտուեց «Կիլիկիա» երգով՝ ներկաների միասնական երգեցողութեամբ:

### ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՁԵՌՆԱՐԿ՝ ՆԻՐԻԱԾ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄԱԿՐՄԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Կիրակի՝ դեկտեմբերի 20-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, հանդիսաւոր միջոցառմամբ նշւեց նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան հիմնադրման 100-ամեակը, որին հրաւիրել եւ ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, Լիբանանից հիւրաքար Սպահան ացելած գերշ. Տ. Վարուժան արք. Հերկելեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգք. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, քահանայից դասը, ազգային վաստակաւոր գործիչ Ժորժիկ Աբրահամեանը, շրջանի Հայ դատի յանձնախմբի, ազգային մարինների, դպրոցների եւ միութեանների ներկայացուցիչները, յորենեար միութեան անդամաւութիներն ու այլ հրաւիրեալներ:

Միջոցառումը բացւած յայտարարւեց երեկոյի հանդիսավար Արթին Մուրադեանի ողջունի եւ շնորհաւորական խօսքով, ապա արտապայտուեց Կանանց գթութեան միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը, որը կարեւորութեամբ ասաց. «1915 թւականին, Հայոց Յեղասպանութեան ու հայրենազրկման մեր պատմութեան ամենաողբերգական իրադարձութիւններին դէմ յանդիման, անհրաժեշտ էր ամենուր տարագրւած

Հայ բեկորներին օգնութեան ձեռք հասցնել եւ նրանց չամոքւող ցաւին սպեղանի լինել, եւ այդ նպատակով հիմնադրւեց «Հայ կանանց Կարմիր խաչ» միութիւնը, որը յետազայում վերանւանւեց «Հայ կանանց գթութեան միութիւն» եւ իր յանձնառու ու գիտակից անդամուհիներով, հաւատարիմ իր նպատակներին ու կոչմանը բարեսիրական հսկայական օժանդակութիւն ցուցաբերեց գաղթականութեանը»:



Նա իր խօսքի մի այլ բաժնում, հաւաստիացնելով, որ Կանանց Գթութեան միութեան անդամութիւներն իրենց ուխտը վերանորոգելով, կառչած են մնալու միութեան հիմնադրման սրբազն գաղափարին, ասաց. «Շարունակելու ենք հիմնադիրների գործունէութիւնը բարեսիրական ոլորտում՝ կարիքի մէջ գտնուող հայրենակիցներին նիւթա-բարոյական օժանդակութիւն ցուցաբերելով. շարունակելու ենք նրանց երթը հայկական մշակոյթի պահպանման ու տարածման ուղղութեամբ՝ հայոց ազգային պարոցներին ու մարզա-մշակութային միութիւններին նեցուկ հանդիսանալով եւ վերջապէս շարունակելու ենք նրանց սրբազն առաքելութիւնը հայրենապահպանման կապակցութեամբ՝ համահայկական ծրագրերին մեր աշխոյժ մասնակցութիւնն ապահովելով եւ հայրենիքի տարբեր բեկորներին օժանդակելով»:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանն ընթերցեց Ն.Ս.Օ.Ս.Ս Արամ Ա. Վեհափառ Հայուապետի օրինութեան գիրը, իսկ հոգԶ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը՝ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի ուղերձը՝ ուղղած միութեան 100-ամեակին:



Ապա երեկոյի կարկանդակը հատուեց առաջնորդ գերշ. Մրազան Հօր, շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաթեանի, միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանի եւ միութեան վաստակաւոր անդամութիւններ՝ Էմիկ Վարդանեանի ու Մարիկ Մինասեանի միջոցով, որից յետոյ մինչեւ ներկաները վայելում էին հիւրասիրութիւնը, հանդիսավալորն ընթերցեց՝ թեմի Պատգամատրական ժողովի դիաստի, Կրօնական ու Թեմական խորհուրդների, շրջանի Հայ դատի յանձնախմբի եւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգԶ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի ու վարչութեան ուղերձներից հատուածները: Կանանց գթութեան միութիւնը շնորհաւորական ուղերձներ էր ստացել նաև Նոր Զուղապի եւ Շահինշահրի հայոց ազգային դպրոցներից ու միութիւններից, որոնք ամբողջութեամբ տպագրվելու են 100-ամեակին նիւրած գրքում:



Օրայ բանախօս Սոնիկ Բաղումեանը, ով նաև յանձն է առել միութեան 100-ամեակի գրքի խմբագրման պարտականութիւնը, իր թեման սկսեց միութեան կողմից 15 մարտ 1915-ին հրապարակած կոչին անդրադառնալով, որտեղ ժողովրդին կոչ էր արտել՝ Զատկական տօնին ընդառաջ գնալով՝ օգնութեան ծեռք մեկնել պատերազմի դաշտում վիրատրներին եւ նրանց թշւան ընտանիքներին:

Բանախօսութեան շարունակութեան մէջ անդրադարձ եղաւ Հայ կանանց գթութեան միութեան գործունէութեանը՝ այն բաժանելով հետեւեալ չորս դիմագերի.

Առաջին՝ Կանանց գթութեան միու-

թիւնը որպէս Հայ յեղափոխական դաշնակցութեան Իրամի կազմակերպական կառոյցի միաւոր.

Երկրորդ՝ Կանանց գթութեան միութիւնը որպէս գերազանցապէս կնոջական առաջադիմական միութիւն.

Երրորդ՝ միութեան մեծ դերակատարութիւնը հայեցի դաստիարակութեան եւ հայ մշակոյթի պահպանման ու տարածման եւ հայրենիքին նպաստելու բնագաւառներում.

Չորրորդ՝ միութեան բարեսիրական գործունեութիւնը, ինչպիսիք են եղել՝ հայ զինուրեներին, որբուկներին եւ կարօտեալներին գույք եւ շերմութիւն փոխանցելը եւ յատկապէս շրջանի միակ ծերանցի հիմնադրումն ու շուրջ կէս դար խիստ հետեւողականութեամբ տյն կառոյցի պահպանումը:



Բանախօսը կարեւորութեամբ ընդգծեց, որ ճիշտ է տարբեր ժամանակներում օրւայ պահանջի եւ հրամայականի շեշտադրութեամբ են ծառալել միութեան աշխատանքները, սակայն բնագաւառների բազմաբնոյթ լինելով հանդերձ, գործունեութիւնը եղել է մէկ եւ միասնական գոյնով ու բնոյթով՝ ծառայել եւ գործել յանուն ժողովրդի, յանուն ազգի եւ հայրենիքի, ինչպէս սկզբում այնպէս էլ իր 100-ամեայ գոյութեան ընթացքում:



Տկն. Սոնիկը իր բանախօսական ելոյթն եզրափակելով՝ ասաց. «100 տարւայ ընթացքում Հ.Յ.Դ. Կանանց Կարմիր խաչով ծլարձակւած ու Կանանց Գթութեան միութեամբ հասակ առած ծառի իւրաքանչյուր օղակը ու հատիկ առ հատիկ ծաղկած, կանաչած ու ղեղնած տերեւները, ամէն մէկը իւրովի աւելի են ամրացրել նրա արմատները, եւ այսօր սիրելի միութենականներ դուք էք դրա կենսունակութեան աղբիւրը. Յուսամ կանանց գթութեան միութեան մասին բոլորիս պատկերացումները մասսամբ թարմացւեցին, եւ կարող ենք համարձակորչն ասել, որ մեր յորելեար միութիւնը հաւաքոյթներ ու

ձեռարւեստի վաճառքներ կազմակերպող միութիւնից շատ աւելի խոր արմատներ ու գործառոյթ ունի, յատկապէս այսօր երր մեր ժողովուրդը գտնւում է այնպիսի համաշխարհային ու տարածաշրջանային միջավայրում, որտեղ համայնքին ու հայրենիքի հզօրացմանը նպաստելով, իր երկու հայկական հանրապետութիւններին զօրավիրական գննելը ոչ թէ հեռակայ տեսլական է, այլ անմիջական նպատակային առաջդրանք ու թելադրանք»:



Ընթացքում օրւայ առթիւ մաղթանքերով հանդէս եկան ազգային-հասարակական վաստակաւոր գործիչ Ժորժ Աբրահամեանը, Լիբանանից ժամանած գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէւանը եւ Հայաստանի Աստուածաշնչական գրասենեակի պատախանատու եւ Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի դասախու Արշակի Գարուչեանը:



Օրւայ գեղարևստական բաժիններ

իրենց ամզուգական կատարումներով ապահովեցին մեներգչունի Արսինէ Մարգարեանը, ընկերակցութեամբ դաշնակահար-երաժիշտ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային միաւորի «Կոռունկ» պարախումբը եւ Հայաստանից ժամանած ժողովրդական երգի նախագծի առաջին եթերաշրջանի յաղթող Սեւակ Ամրոյեանը:



Ծրագրի աւարտին ներկաներին իր հայրական օրինանքը փոխանցեց առաջնորդ Սրբազն Հայրը, ով առաւել շեշտաւորելով Հայ Կանանց Գթութեան Միութեան գործուելութիւնը եւ ընդհանրապէս հայ կնոջ դերը Ցեղասպանութեան օրերին եւ սփիտքեան պայմաններում, աւելացրեց. «Համայնքիս միակ ծերանոցը չուրջ մէկ դար է, որ վստահւել է այս միութեանը, որոնք ամենայն յանձնառութեամբ եւ հոգատարութեամբ զեկավարում են այն: Մի վայր ուր բնակւում են մեր պապիկներն ու տատիկները: Եւ այս միութեան իւրաքանչիւր անդամուհի հոգ է տանում նրանց»:

Վերջում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը շնորհաւորելով Հայ կա-

նանց գթութեան միութեան 100-ամեայ նիկուլաս ու ծառայութիւնը յորդորեց՝ նոյն եւանդով եւ առանց շեղումի քայլել դէպի ապագայ:



Յատկանշական է, որ ծրագրի ընթացքում թեմակալ առաջնորդ Սրբազն Հօր առաջարկով տեղի ունեցաւ նիկորահաւաք, որտեղից գոյացած գումարը Կանանց Գթութեան միութեան միջոցով ծառայեցիւլու է հայրենանպաստ աշխատանքներին:



## ՀԱՅ ՈՒՍ. ԶՀԱՐՄԱԽԱԼ ՄԻՌՈՒԹԵԱՆ ՀԻՄԱՂԻՄԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՁԵՌՆԱՐԿ

Հայ ուս. Զհարմախալ միութեան նոր Զուղայի մասնաճիղի վարչութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ՝ նոյեմբերի 13-ի երեկոյեան, նոյն միութեան կենտրոնաւողի յարկի տակ նշւեց Զհարմախալ միութեան հիմնադրման եւ գործունեութեան 85-րդ տարեդարձը:



Առիթը նշելու համար՝ հիմնադիր սերնդի պատկերներով զարդարած սրահում համախմբել էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քինց. Գալստանեանը, արժն. Տ. Վազգէն քինց. Քէօշկէրեանը, Փերիոյ կրթ. միութեան կենտ. Վարչութեան ներկայացուցիչները, մասնաճիղի անդամ-ուիհներն ու հրատիրեալներ:

Հանդիսութեան մեկնարկը տրեց միութեան հիմնի յոտնկայս ունկնդրութեամբ, որից յետոյ ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկաւ օրիայ հանդիսավար Կարէն Խանլարեանը, ով ներկաներին հրատիրեց մէկ րոպէ յոտնկայս լոռութեամբ յարգել միութեան վաստակաւոր անդամուին նորոգ հանգուցեալ Ովսան Ղարախանեանի յիշատակը:



Այնուհետեւ խօսքը տրեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քինց. Գալստանեանին: Արժն. Քահանայ Հայրը շնորհաւորելով միութեան 85-ամեակի առթիւ, կարեւորութեամբ ընդգծեց հայ համայնքներում ազգային մար-

մինների կողքին աշխատող միութիւնների ներկայութիւնը եւ հայապահպանման ուղղութեամբ նրանց նշանակալի դերը: Նա դրաւտելով միութեան ծաւալած աշխատանքները, յոյս յայտնեց, որ նոր սերունդը եւս պահպանը կը լինի այս գաղափարաբանութեան եւ այն կը փոխանցի պապայս սերնդին:

Ծրագրի շարունակութեան մէջ օրւայ առթիւ կարկանդակի կորելու պատիւ տրեց միութեան բազմավաստակ եւ երցագոյն անդամ Սոնիա Միրզաքէրեանը եւ ընթերցեց Թերիանից յղած Հայ ուս. Զհարմախալ միութեան կենտրոնական վարչութեան ուղերձը:

Երեկոյի ընթացքում շնորհաւորանքի խօսքով ու բարեմայթանքներով հերթաբար ելոյթ ունեցան միութեան Հաշվերննիշ մարմնի, Զեռնարկային յանձնախմբի եւ Գեղարւեստական միաւորի ներկայացուցիչներ՝ Ֆրիդա Ալլահվերդեանը, Սեդա Բալեանը եւ Արագ Տերգիգորեանը, ինչպէս նաև Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանը:



Գեղարւեստական բաժնում երգերով հանդէս եկաւ Րաֆֆի Խուդաբախչեանը, որին գիտադի կատարմամբ ընկերակցում էր Ժանետ Խուդաբախչեանը: Երգեցին նաև Լիդա Ցակորեանը եւ Ռիտա Մինասեանը, որոնց երգեիննի կատարմամբ ընկերակցում էր Ալբերթ Ղազարեանը:

Պաշտօնական բաժննն ամփոփեց մասնաճիղի վարչութեան նախագահ Վրթանէս Մկրտչեանի շնորհակալական խօսքով՝ ուղղած միութեան Զեռնարկային յանձնախմբին, Գեղարւեստական միաւորին, գեղարւեստական բաժնի դերակատարներին եւ բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իրականացաւ միշոցառումը: Նա շնորհակալութիւն յայտնեց նաև ստացած ուղերձի ու հեռախոսագանգերի կապակցութեամբ եւ հանդիսատեսին՝ իր ներկայութեամբ յոբելե-

նական ձեռնարկը յարգելու համար:



Այնուհետև երեկոն շարունակեց ընթրիքի սեղանի շուրջ՝ աւելի ջերմ մժենոլորտի ներքոյ իրականացած խրախճանքով։

Ընթացքում ներկաները առիթ ունեցան այցելելու հաեւ կազմակերպած ցուցահանդէսը, ուր ցուցադրուել

Էին Զհարմանալ գաւառի հայկական տարազ եւ լուսանկարներ, որոնցով արտացոլւել էր նոյն գաւառի կեանքը եւ միութեան հարուստ անցեալը։



Յատկանշելի է, որ 85-ամեակին նիրած ծրագրերի շարանում, ուրբաթ՝ հոկտեմբերի 30-ին, մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, Ս. Ստեփանոս եկեղեցու տեղի է ունեցել Հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ ննջեցեալ հիմնադիրների ու միութեականների։



### ՅՈՒՇԵՐԵԿՈՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՍՏԱԿԱՆՈՐ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԱԽԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Փերիոյ Կրթասիրաց միութեան Կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ, նոյեմբերի 20-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան դահլճում յուշերեկոյ տեղի ունեցաւ՝ ի յիշատակ Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցների վաստակաւոր ուսուցչուին եւ նոյն միութեան գեղարևուական ծրագրերի տարիների պատասխանատու՝ Անահիտ Կիրակոսեան-Տէր-Գրիգորեանի։

Միջոցառմանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, քահանայից դասը, հանգուցեալի հարազատները եւ բարեկամները, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ եւ ժողովուրդ։

Ծրագրի սկզբում ներկանները դիմեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի արտայապտած դամբանական խօսքի տեսանիւթը՝ Անահիտ Կիրակոսեանի մահան կապակցութեամբ, ինչպէս նաեւ հատածներ այն ձեռնարկներից, ուր տկն. Անահիտը հանդէս էր եկել հանդիսավարութեամբ կամ պարսկերէն ու հայերէն լեզուներով բանաստեղծութիւնների ասմունքներով։

Այնուհետև Փերիոյ Կրթասիրաց միութեան Կենտրոնական վար-

չութեան նախագահ Հայկ Հայրապետեանն իր ելոյթում, Անահիտ Կիրակոսեանի մահիան առաջին տարելիցի առթի յուշերեկոյի կազմակերպումը միութեան պարտքը համարելով եւ գնահատելով նրա նիդրական վաստակը, ուսուցչուի մահը մեծ կորուստ համարեց դպրոցի եւ միութեան համար եւ ասաց, որ թէեւ նա ֆիզիկապէս բաժանած է մեղանից, սակայն նրա թողած յիշողութիւնը՝ իր վառ անհատականութեամբ, միշտ կը մնայ մեզ հետ:



Պրճ. Հայրապետեանը խօսքի աւարտին շնորհակալական խօսք ուղղեց յուշերեկոյի գեղարւեստական բաժնի պատասխանատուներ՝ դկու. Սիլիա Ալլահվերդեանին, Արթին Քեշիշեանին, եւ դերակատարներին, ինչպէս նաև հանդիսատեսին, ովքեր իրենց ներկայութեամբ յարգել էին ուսուցչուի յիշատակը:



Ցաջորդ բաժնում նրա աշակերտներից Վանէ Շահնազարեանը հանդէս եկաւ դպրոցում ուսուցչուի Անահիտից ունեցած գեղեցիկ յուշերով:

Խորհուրդներու լեցուն երեկոն առաւել յուզիչ եւ տպաւորիչ դարձաւ վաստակաւոր ուսուցչուի ամենասիրած երգերածշութիւնների եւ բանաստեղծութիւնների կատարումներով: Այս շրջա-

գծում դաշնամուրի կատարմամբ համերէս եկաւ երաժիշտ դոկտ. Արքի Բաբումեանը՝ ընկերակցութեամբ Մելինէ Հայրապետեանի ֆլեյտայի նագակցութեամբ: Երգեր կատարեցին՝ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանը ու մեներգիչ Մելանի Յովհաննիսեանը, իսկ ասմունքներով հանդէս եկան՝ Սոնիա Դիլանչեանը, Մարտունի Խաչիկեանը եւ Հայուիեաց Բարեգործական ընկերութեան «Փարոս» Ասմունքի խմբի անդամուիններ՝ Վանիա Պետրոսեանը, Նարեգա Սիմոնեանը, Վանա Զոհրաբեանը եւ Մելիրի Կարապետեանը:

Ընթացքում ընթերցւեցին հանգուցեալի անթառամ յիշատակին նիդրած խօսքեր. Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի խօսքը՝ ընթերցեց Սոնիա Դիլանչեանը, իսկ համալսարանի վաստակաւոր դասախոս Ազատ Մաթեանինը՝ Վեհանուշ Խուդափախչեանը:



Միջոցառման եզրափակիչ խօսքում, թեմակալ առաջնորդ Սրբազն Հայրը գնահատեց Փերիոյ կրթասիրաց միութեան վարչութեանը՝ յուշերեկոյի կազմակերպման համար եւ գեղարւեստական բաժնի մասնակիցներին, ովքեր իրենց ելոյթներով իմաստարեցին երեկոն: Այնուհետեւ Սրբազն Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ ասաց, որ Աստւած իւրաքանչիւրիս մի շնորք է պարգևել, որը պէտք է զարգացնենք, իմաստարենք եւ այն ի սպաս դնենք մեր հասարակութեանը եւ շրջապատին: Նա նշելով, որ պէտք է վարենք աստւածայանոյ ու մեր պարագային հայավայել կեանք, այդ առումով գնահատեց հանգուցեալ Անահիտ Կիրկոսեանի մարդկային բարձր արժանիքները եւ Աստծուց հայցեց նրա հոգին երկնային խաղաղութեան մէջ հանգչեցի, իսկ հարազատներին Սուլր Հոգով մխիթարի:



Վերջում միութեան Կանանց միաւորի միջոցով տեղի ունեցաւ համեստ ընդունելութիւն:

## ՀԱՅԱՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄԱԴՐԱՄԻ ՀԵռոՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ 2015-Ի ՇՐՋԱԳԾՈՒՄ ՆԻՒՐԱՀԱԱՔՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Հինգշաբթի, նոյեմբերի 26-ի երեկոյեան ժամը 7:30-ից, նոր Զուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, շրջանի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, Հայաստան համահայկան հիմնադրամի «Հեռուստամարաթոն 2015»-ի շրջագծում, «Մեր տունը» նշանաբանի ներքոյ կայացաւ թելեթոն-նիւրահաաքրը:



2003 թւականից ամենամեայ կարգով նոր Զուղայում կազմակերպող սոյն նիւրահաաքրին, ինչպէս նախորդ տարիները, իրենց աշոյժ եւ խուռներամ մասնակցութիւնը ցուցաբերեցին եւ նիւրատութիւն կատարեցին՝ Սպահանի հայոց թեմի անունից նոյն թեմի Թեմական խորհուրդը, նոր Զուղայի եւ Շահինշահրի հայ համայնքների միութիւնները, հայոց ազգային դպրոցները եւ ժողովուրդը:



Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբեկն արք. Զարեանը նոյնայս նիւրահաաքրի կենտրոն այցելեց եւ նիւրատութիւն կատարեց, որը մեծ ոգեւորութիւն պատճառեց ներկաներին:

«ԱՅԻ» խմբի երգերի ու երաժշտութիւնների կենդանի կատարմամբ սրահում տիրում եր ուրախ մթնոլորտ:

### Հ.Յ. ԴԱՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄԱԴՐՄԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԻՒՍԱԻՈՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հայ Ժողովրդից ծնունդ առած եւ յանուն հայ ժողովրդի ու հայունիքի ընդհանրական շահերի իր լաւագոյնը զոհաբերած կուսակցութեան՝ Հայ լեղափոխական դաշնակցութեան հիմնադրուման 125-ամեակի առթիւ, հինգշաբթի՝ նոյեմբերի 12-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, նախաձեռնութեամբ շրջանի Հայ դատի «Արձագանք» քարոզական յանձնախմբի, տեղի ունեցաւ տօնախմբութիւն, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբեկն արք. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգք. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, թեմի հոգեւորականաց դասը, շրջանի Հայ դատի յանձնախմբի անդամները, ազգային-հասարակական

կաստականու գործիչ Ֆորմիկ Արքահամեանը, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, գաղափարակից ընկերներ եւ հոծ ժողովուրդ:



Ծրագիրն սկիզբ առաւ 125-ամեայ կուսակցութեան քայլերգ

«Մշակ Բանոր»-ի յոտմկայս ունկնդրութեամբ, որից յետոյ բացման խօսքով ելոյթ ունեցաւ երեկոյի հանդիսավար Մանիա Դուկասեանը:



Բացման խօսքում անդրադարձ էր կատարել Դաշնակցութեան ծնունդին, գաղափարին, ինչու չէ նաև մէկ դար ու քառորդ ծաւալած լայն գործութեանը՝ հայրենապահպանման, հայապահպանման եւ Հայ դասի հետապնդման ուղղութեամբ: Խօսքում կարեւորութեամբ ասւած էր. «Դաշնակցութեան գոյութեան պատճառը Հայաստանն է ու Հայ ժողովուրդը, նրա սրբութեան սրբոցը՝ Հայաստանի անվտանգութիւնն ու զարգացումը, իսկ դա ապահովելու միակ գրաւականը՝ Հայոց անկախ պետականութիւնը: Այսօր մեզ կրկին որակական ոստիւն ու թուիչք է պէտք՝ հայրենիքում արդարութիւնը, ժողովրդավարութիւնը եւ ազգային հզօր կազմակերպւածութիւնը ապահովելու, պետական համակարգը բարեփոխելու, իսկ միջազգային ու տարածաշրջանային ամենաբարդ կացութիւններում յայսուած սիիւռքը վերակազմակերպելու, եւ յատկապէս միեւնոյն նպատակի ու գերինդրի շուրջ Համախմբւելու համար»:

Այնուհետեւ ցուցադրւեց «Երկիր Մերդիա» հեռուստաալիքութեան միջոցով պատրաստած տեսահիմքը՝ Հ.Յ. ծննդեան 125-ամեակին նկարած, որից յետոյ թեմ հրաւիրւեց ազգային-հասարակական վաստակաւոր գործիչ Ժորժիկ Աբրահամեանը՝ օրիա առթիւ բանախօսելու: Նա իր խօսքի սկզբնական բաժնում նշեց, որ Դաշնակցութեան մասին մտածելիս եւ նրա պատմութիւնն ընթերցելիս ունենում է երախտիքի եւ հապատութեամբ համեմած արժանապատութեան խորը գործը:

Ժորժիկ Աբրահամեանը կարեւորութեամբ ընդգծելով, որ Դաշնակցութեան սկզբունքային ուղղութիւնների համաձայն՝ կուսակցութեան շարքեր մուտք գործող առաջնորդում է իր խորհու ու կամքով, հակիրճ ակնարկ ունեցաւ կուսակցութեան 125-ամեայ գործունեութեանը եւ ասաց. «Իսկզբանէ Դաշնակցութիւնն աշխատեց՝ որպէս ազգային պատագրական պայքարի կազմակերպութիւն եւ երբէք չկորցրեց սեփական ժողովրդին պատագրելու իր յատկութիւնը... Յետագայում, Հայոց պետականութեան Հիմնադրման ժամանակաշրջանում, չկորցնելով իր անմնացորդ ծառայութեան նկարագիրը՝ անցաւ քաղաքական աշխատանքի, եւ երբ Հայութիւնը կրկին սփռւեց աշխարհում, այս անգամ նոյն կազմակերպութիւնը լծեց Հայապահպանման գործին: Այսօր բոլորը միարեան խոստովանում են Սփիւռքում Դաշնակցութեան կատարած գործունէութեան մասին՝ Հային Հայ պահելու եւ Հայութեանն անմնացորդ ծառայելու ուղղութեամբ: Իսկ երբ Հայեց Արցախի ինքնապաշտպանութեան մարտի ահազանգը, Դաշնակցութիւնը նոյն պատագրական պայքարի հզորութեամբ նետւեց պատերազմի դաշտ»:

Բանախօսն իր խօսքի երկրորդ բաժնում թւարկեց անցնող մէկ տարիաց ընթացքում Դաշնակցութեան նեկավարութեան եւ մասնակցութեան շնորհիւ իրագործած հսկավական աշխատանքները՝ ինչպիսին են՝ Սփիւռքի եւ Հայաստանի համախմբւելը՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հոչակագրի ծեւակերպման շուրջ, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի շրջագծում կազմակերպածութիւնը ապահովելու, պետական համակարգը բարեփոխելու, իսկ միջազգային ու տարածաշրջանային ամենաբարդ կացութիւններում յայսուած սիիւռքը վերակազմակերպելու, եւ յատկապէս միեւնոյն նպատակի ու գերինդրի շուրջ Համախմբւելու համար»:



Բանախօսական ելոյթին յաջորդեցին աշուղական, հայրենասիրական եւ յեղափոխական երգերի կենդանի կատարումները՝ Հայաստանի ժամանած «Ժողովրդական երգիչ» նախագծի առաջին եթերա-

շլրշամի յաղթող Սեւակ Ամրոյեամի միջոցով, իսկ երեկոն խկական տօնի վերածեց, երբ յեղափոխական երգերի կատարման ընթացքում, հանդիսատեսը միաբերան ընկերակցեց երգչին:

Զեւնարկի աւարտին Արցախի ազգային վիճակախաղի 2014 թականի Թեմիս յաղթողներին յանձնեցին պատկան վկայագրերը՝ ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգեն արք. Զարեանի և սոյն վիճակախաղի տոմսերի վաճառման գործը շրջանումն կազմակերպող յանձնախմբի անդամներ՝ Աղրինէ Խաչատրեանի ու Արմինէ Ղարիսանեանի:



Յատկանշական է, որ Արցախի ազգային ամենամեայ վիճակախաղի շրջագծում, 2014 թականին նոր Զուղայից Սրբուր Բաղրամեանը եւ Շիրազից Միրօ Մանուկեանը շահել էին հայկական նախշերով գորգեր:



#### **Հ.3.Դ. «ՌՈՒԲԷՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱԼ ՀԻՄԱԿԴՐՈՒԹԵԱԼ 35-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԲԱՆԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

2015 թականի նոյեմբերի 19-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, Հ.3.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ, բանախօսական-գեղարւեսական երեկոյ իրականացւեց՝ միութեան 35-ամեակին նվիրած, որտեղ ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգեն արք. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների ու միութիւնների ներկայացուցիչներ, գաղափարակից ընկերներ եւ ժողովուրդ:



Տրագիրն սկիզբ առաւ Հ.3.Դ. քայլերգ «Մշակ Բանուր»-ի յուտընկայս ունկնդրութեամբ, որը կատարեցին ՌԵՄ-ի անդամ-ուիշիները, ապա բացման խօսքով հանդէս եկաւ երեկոյի հանդիսավար Կարեն Խանլարեանը, ով անդրադառնալով միութեան հիմնադրմանը, նշեց. «35 տարիներ առաջ ընդ վկելով հայրենիքի եւ սփիւռքի հայ ժողովրդին սպառնացող մարտահրաւէրների դէմ, ծնունդ առաւ «Ռուբէն» երիտասարդական միութիւնը, որը սփիւռքեան անհաւասար պայքարում արդէն կեանքի կոչւած եւ գործող իւրօրինակ միութիւնների պէս ստանձներով իր կենսական դերը եւ առաքելութիւնը, պայքար մղեց գյխաւորապէս երկու գուգահեռ ճակատներում, հայապահանման-հայակերտման եւ Հայ Դատի յետապնդման ուղղութեամբ»:

Հանդիսավարի արտայայտութիւններին յաջորդեց «Ռուբէն» երիտասարդական միութեան վարչութեան խօսքը, որն ընթերցւեց Արմօ


Մինասեանի միջոցով:



Խօսքում անդրադառնալով Հ.3.Դ. Դաշնակցութեան երիտասարդ հիմնադիրներին, կարեւորութեամբ ասած էր. «Իգուր չէ, որ նման երիտասարդներին յենւած մի կուսակցութիւն գոյատեւում է 125-տարի, Հ.3.Դ.-ը երիտասարդ արիւնից ծնւած եւ հէնց այդ երիտասարդների արիւնով գոյատեւած մի կուսակցութիւն է»: Վարչութեան ներկայացուցիչն իր արտայայտութեան շարունակութեան մէջ ակնարկ ունենալով 1980 թականին նոր Զուղայում հիմնադրւած Հ.3.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեանը, նշեց, որ սոյն միութիւնն անանակույտ է յեղափոխական-քաղաքական գործիք Ռուբէն Տէր Մինասեանի անունով, նապատակ ունենալով՝ դաստիարակելու՝


ազգաւոր, կիրթ եւ Հայ դասի խնդրի լուծման ուղղութեամբ պալքարող երիտասարդներ:

Երեկոյի ընթացքում Ռ.Ե.Մ.-ի հիմնադրման եւ գործունեութեան շրջագծում տեղի ունեցան երեք առանձին թեմաներով բանախօսական ելոյթներ: Բանախօսութիւններն ընթացան հետաքրքիր եւ հաճելի գրուցի ներքոյ, քանի որ իրաքանչիւր բանախօս իր ելոյթը ծաւալեց հանդիսավարի հարցումներին պատասխանելով:



Առաջին բանախօսութեան թեման էր «Հ.Յ. «Ռուբեն» երիտասարդական միութեան հիմնադրումը», որը ներկայացրեց Նոէլ Մինասեանը: Նա անդրադառնալով երիտասարդական միութիւնների հիմնադրման անհրաժեշտութեանը, նշեց, որ Հ.Յ.-ի համար, իր հերոսական պատմութեան բոլոր հանգրւաններում, երիտասարդութիւնը եւ երիտասարդական միաւորները մեծագոյն արժեքներ են եղել, կուսակցութեան առաջնորդող ուժը, յեղափոխական նկարագրի առանցքը եւ ոգին:

Չարունակութեան մէջ Նոէլ Մինասեանը խօսեց Հ.Յ. երիտ-պատանեկան միութիւնների հիմնադրման գաղափարի առաջացման եւ հասունացման մասին, որոնց ժամանակին նպաստել են կարեւոր այլ գործօններ, ինչպիսիք են՝ միջազգային քաղաքական կացութիւնը, երիտասարդական շարժումներն ու ազատագրական պալքարները: Բանախօսը յատուկ անդրադարձ ունեցաւ Հ.Յ. Դաշնակցութեան 20-րդ Հնդկանուր ժողովին, որտեղ որոշել էր կազմակերպական բոլոր շրջաններում անևապաղ հիմնադրել երիտասարդական միութիւններ եւ սյան որոշման լոյսի ներքոյ հերթաքար 1979 թ. Թուրքիանում եւ 1980 թ. Նոր Զուղարկում հիմնադրւած Հ.Յ. «Ռուստոմ» եւ «Ռուբեն» երիտասարդական միութիւններին, որոնք ծաւալուն աշխատանքներ իրագործելով գաղափարական եւ դաստիարակչական ոլորտներում, նոր թափ եւ որակ հաղորդեցին կազմակերպական կեանքին:



Այնուհետեւ երկրորդ բանախօս Վարուժ Մովսիսեանն անդրադարձաւ «Երիտասարդութիւնը եւ զինեալ պալքարը» թեմային, որտեղ խորհրդանշական համարեց Ռ.Ե.Մ.-ի 35-ամեակի եւ զինեալ պալքարի 40-ամեա յորելեանների համբկման փաստը: Նա սկզբում մէջբերեց Հ.Յ. հիմնադրներից Քրիստովոր Միքայէլեանի գաղափարը՝ ցուցական աշխատանքներին եւ զինատար խմբերին ու բախումներին ուղղած, որտեղ ասում է. «Մրանք գայիս են կազմակերպելու կուռող ուժերը, ժողովրդականցնելու բողոքի ճանապարհը, կրթելու ժամանակակից նոր սերունդը, վառ պահելու ժողովրդի դիմաղրական տրամադրութիւնը, հարւածելու թշնամու հեղինակութեանը (ներքին թէ արտաքին) եւ գրադեցնելու հասարակական եւ հանրային կարծիքը...»:

Վարուժ Մովսիսեանն իր խօսքի երկրորդ բաժնում ակնարկելով 1980-ականների ընթացքում Իրանի քաղաքական մթնոլորտին, որը երիտասարդներին մղում էր լայն ու եռանդուն աշխատանքների, կարեւորութեամբ թարկեց նշանակութեանը (ներքին թէ արտաքին) եւ գրադեցնելու հասարակական եւ հանրային կարծիքը...»:



Օրայ յաջորդ բանախօս Վահէ Թորոսեանն խօսեց Հ.Յ. երիտասարդական միութիւնների հիմնադրման նպա-

տակմերի եւ գիմեալ պայքարից յետոյ վերջին 25 տարիների ընթացքում «Ռուբէն» երիտասարդական միութեան գործունէութեան մասին։ Նա կարեւորութեամբ ընդգծեց, որ երիտասարդական միութիւնները իրայատուկ դպրոց են, որտեղ դաստիարակում են ազգային մտածողութեամբ, արդարութեանը հաւատող, ընկերվարական ու ժողովրդավարական արժեքներին դաւանող եւ անհրաժեշտութեան պարագային յեղափոխական պայքարից շխուսափող ու չվարանառող երիտասարդներ։



Վահէ Թորոսեանն իր խօսքի երկրորդ բաժնում անդրադարձաւ յատկապէս Ռ.Ե.Մ.-ի կատարած կարեւորագոյն աշխատանքներին, ինչպիսիք են՝ Իրանում առաջին անգամ այ համար Զաւախին նվիրած ձեռնարկի եւ Թելեթոն նիրահաւաքի կազմակերպումը, բողոքի համահաւաքներն ու ցոյցերը, «Դէպի երկիր» պաշտօնաթերթի տպագրումը եւ Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը պարսիկ հայ-

րենակիցներին ճամաչեցնելու նպատակով իրագործած աշխատանքները։

Բանախոսական բաժինները մէջբերեցին միութեան անդամների հայրենասիրական եւ յեղափոխական երգերի ու բանաստեղծութիւնների գեղարվեստական կատարումներով, որտեղ «Արփա» նագախմբի ընկերակցութեամբ մեներգերով հանդէս եկան Վանա Շիրամեանը՝ «Մարտիկի երգը» եւ «Անաքել Մուշեղ», Թենի Մկրտչեանը՝ «Հայ կամաւորներ» եւ Վեհանուշ Խուդաբախշեանը՝ «Վեր կաց ժողովուրդ» երգերով, իսկ Վեհանուշ Խուդաբախշեանը ասմունքոց «Պարտք» բանաստեղծութիւնը։

Ծրագրի փակումը կատարւեց «Արինուտ Դրօշ» երգով՝ Թանգիկ Միրզախաննեանի, Վանա Շիրամեանի, Թենի Մկրտչեանի եւ Վեհանուշ Խուդաբախշեանի կատարմամբ։

Յատկանշական է, որ Ռ.Ե.Մ.-ի պաշտօնաթերթ «Դէպի երկիր»-ը տարիների դադարից յետոյ վերահրատարակել էր Ռ.Ե.Մ.-ի 35-ամեակի առիթով, որը բաժնեց ներկաների միջեւ։

Միջոցառման աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն։




## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԶԵՐՆԱՐԿ՝ «1915-Ի ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՒՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նիւրած միջոցառումների շարանում, 2015 թւականի վերջին օրերին, Նոր Զուղայում եւս մի ձեռնարկ իրականացւեց, սակայն այս անգամ ծրագրի նախաձեռնողն ու կազմակերպիչն էր շրջանի միակ պատաճեկան միութիւնը։ Ձեռնարկ, որտեղ իրօրինակ կերպ ոգեկոչւց Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը՝ լուսարձակի տակ առնելով ցեղասպանի ճիրաններից փրկելու համար՝ 1915 թւականին իրագործած հայ ժողովրդի պատմութեան պահանջի էշերը՝ ինքնապաշտպանական հերոսամարտերը։

Հ.Յ.Դ. «Թադէոս Թադէոսեան» պատաճեկան միութեան վարչութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ, նոյեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ «1915-ի ինքնապաշտպանական կումբերը» խորագրով բանախօսական-գեղարթեստական ձեռնարկը, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անահիա վլրդ. Գունանեանը, շրջանի Հայ Դատի, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչները, կազմակերպիչ միութեան անդամների ծնողները եւ Նոր Զուղայի ու Շահինշահրի հայ համայնքների ժողովուրդ։

Ամբողջութեամբ պատաճի միութեանականների միջոցով իրականացւած ձեռնարկը բացւած յայտարարւեց երեկոյի հաղորդավար Վանէ Յարութիւնեանի խօսքով, ով կարեւորութեամբ ասաց. «Հայ ժողովուրդ, առանց քեզ մեր մենքը, մենք չենք: Այդպէս են դաստիարակել մեզ: Ես՝ պատանիա, քո միասնական ուժի գաղտնիքն եմ սերտում, որպէսզի ընդվզեմ եւ չըռեմ քեզ նսեմացնող ցանկացած վտանգի դէմ, ինչպէս չրոեցին դաշնակցական հերոսները մեր՝ կրելով Հայի դիւցազնի ըմբոստ ոգին»։



Այնուհետև «Թադէոս Թադէոսեան» պատաճեկան միութեան վարչութեան խօսքն ընթերցեց Արամէ Մովսիսեանը, որտեղ անդրադառնալով Ցեղասպանու-

թեան 100-ամեակի ոգեկոչման նպատակով՝ հայութեան միասնական շանքերի շնորհիւ տեղի ունեցած աշխատանքներին եւ յատկապէս երեկոյի թեմային՝ ասած էր. «Միութիւնս այս տարի փորձել է իր տարեկան ձեռնարկը նւիրելով ինքնապաշտպանական հերոսամարտերին, իր յարգանքի տուրքը մատուցել՝ այն օրերի հերոս-հերոսունքների անմոռաց յիշատակին, արժանաւոր կերպով ոգեկոչել նրանց խիզախութիւր եւ բարձրաձայնել, թէ շարունակելու է նրանց երթը՝ մինչեւ հայ ազգի բոլոր իրաւունքների վերականգնումը, մինչեւ ցեղասպանից հատուցում ստանալը, մինչեւ ազատ անկախ եւ միացեալ Հայաստանի կերտումը»։



Ծրագիրը հիմնականում բաղկացած էր հինգ բանախօսական ելոյթներից, որտեղ առանձնաբար անդրադարձ կար հինգ հայաբնակ շրջաններում իրականացւած ինքնապաշտպանական հերոսամարտերի պատմութիւններին՝ յատկապէս ներկայացնելով ինքնապաշտպանութեան գաղափարի առաջացումը, դաշնակցական ֆիդայինների դերը մարտերի կազմակերպման եւ ժողովորդի պաշտպանման հարցում, կումբերի աւարտը եւ դրանց ազդեցութիւնը 1918-ին հայկական հանրապետութիւն կերտելու գործում։

Բանախօսական թեմաները ծաւալւեցին հետեւեալ հերթականութեամբ։



Շապին-Գարաբիսարի մարտը ներկայացրին Նելիսանա Գրիգորեանն ու Սիհան Անդրիսեանը, Վանի ազատամարտը՝ Մինելի Ղազարեանը եւ Գէորգ Մովսիսեանը, Ուրֆայի կոհիւը՝ Նազելի Ղարիբեանն ու Արմին Միհնասեանը, Մուսա լեռան հերոսամարտը՝ Սելին Մկրտչեանը եւ Րաֆֆի Դիլանչեանը, իսկ Սասունի

ազատամարտը՝ Տաթևիկ Տէր-Մարտիրոսեանն ու Արայիկ Սիմոնեանը:



Խրաբանչիր ելոյթին յաջորդում էր հերոսամարտին նվիրած յաղափոխական երգի կենդանի կատարումը՝ հոգԶ. Տ. Անահիա վրդ. Գուճանեանի ղեկավարութեամբ: «Շապին-Գարաբիսար» եւ «Մուսա լեռ» երգերը մենակատարեց Դամիթ Թորոսեանը, «Հայ քաշեր»-ը կատարեց Շանթ Թահմազեանը, իսկ «Օսմանական գոր վաշտերե»-ը՝ Արայիկ Գրիգորեանը:

Բանախօսութիւնների աւարտին նախ հնչեցին «Ի զե՞ն հայեր» եւ «Թիկունքդ լայն» երգերը՝ միութեանականների խմբական կատարմամբ, ապա խմբի ձայնակցութեամբ «Անցնինք Սասուն» երգի տարրեր բաժիններն առանձնաբար մենակատարեցին վերոնշեալ երեք մեներգիչները: Արեգ Յարութիւնեանց, Լուսին Միհնաւեանց, Հայա Դիլանչեանց եւ Նինե Շահիշանեանց կազմած պարախմբի միջոցով, «Հայ քաշեր» եւ «Անցնինք Սասուն» երգերին զուգահեռ կատարեցին հայկական պարեր:

Սոյն ձեռնարկը իւրօրինակ կարելի է համարել, քանի որ երեկոյի բոլոր դերակատարները զգեստատրաւած

էին հայկական տարագներով: Ուշագրաւ էին յատկապէս բանախօսների հանդերձանքը, որոնք պատկանում էին պատկան հայկական շրջաններին:

Ծրագրի եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ Սպահանցի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն արք. Զարեանի հայրական օրինանքը: Սրբազն Հայոց գնահատանքի խօսք ուղղելով «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան անդամներին Հայոց ցեղապահնութեանը նկրած բովանդակալից ձեռնարկ կազմակերպելու համար, նշեց, որ նման միջոցառումները իմաստատրում են ամեակները եւ մեզ տալիս են ինքնանաշման գիտակցութիւն, որպէսզի մեր անցեալն ու պատմութիւնը ճանաչելով, կարողանանք կերտել մեր ապագան:

Թեմակալ առաջնորդն իր խօսքի մի այլ բաժնում անդրադասնալով ինքնապաշտպանական կոհիներին եւ հայ պատմութեան մէջ արձանագրուած ազատագրական այլ պայքարներին ու հերոսներին՝ ասաց, թէ նման դէպերը ասում են ֆուրքին եւ հայ ազգի բոլոր թշնամիներին, որ մեր ժողովորդը գիտի ինքն իրեն պաշտպանել եւ պայքարել. մեր ժողովորդը գիտակից է իր արժանապատութիւնը պահելու հարցում:

Հ.Յ.Դ. «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան նախաձեռնութեամբ եւ Նոր Զուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան մեկնասութեամբ լոյս է տեսել «1915-ի ինքնապաշտպանական կոհիները» խորագրով գիրքը, ուր տեղ են գտել նշանակած հերոսամարտերի պատմութիւնները՝ քաղաք տարրեր աղբիւրներից: Զեռնարկի աւարտին սոյն գիրքը բաժանւեց ներկաներին:



### ՄԻՈՐԵԱՅ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԴԻԼԻԶԱՆԻ «ՆԱԽՆԻՐ» ՔԱՐԱՅՐԸ



Կազմակերպած ծրագրի իրագործմանը: Խմբին առաջնորդեցին համայնքի հոգեւոր տեսուչ հոգէ. S. Անանիա Վրդ. Գումանեանը եւ վարչութեան 2 ներկայացուցիչը:

Մասնակիցները նախ այցելեցին բնութեան հիմաքանչ վայրերից՝ Դիլիջան քաղաքի «Նախնիր» տեսարժան քարայրը, որը գոյացել է շուրջ 70 միլիոն տարի առաջ, ծանօթացան քարայրի հետաքրքիր պատմականի եւ այն յայտնաբերւելու դրւագի հետ: Այնուհետեւ ճաշելուց յետոյ մեկնեցին Մահալաթ քաղաքի գեղեցիկ գրուայգին եւ մի յագեցած ու զարձալի օր անցկացնելուց յետոյ, երեկոյեան վերադարձան տուն:

Ծրագայութիւնը տեւեց առաւտեան ժամը 6:30-ից մինչեւ երեկոյեան 7:30-ը:

### ԱՄԱՆՈՐԵԱՅ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



S. Սահակ քհն. Մինասեանը, Համայնքի վարչութեան անդամները եւ բազմաթիւ այցելուներ:

Հանդիսաւոր բացումը կատարւեց հոգէ. S. Անանիա Վրդ. Գումանեանի ձեռամբ, որից յետոյ բարիգալստեան խօսքով, Միութեան նախագահունի տկն. Լինա Մովսիսեանը ողջունեց բոլոր ներկաներին եւ շնորհակալութիւն յայտնեց նրանց ներկայութեան համար: Տկն. Մովսիսեանը իր խօսքի մէջ առանձնապէս շնորհակալութիւն յայտնեց միութեան անդամութիներին, որոնք միշտ յանձնառու կեցւածքով զօրավիզ են հանդիսանում միութեան գործունեութեան վերելքին եւ յայտնեց, որ կազմակերպած ցուցահանդէս-վաճառքի հասոյթը պէտք է ծառայի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ուղղութեամբ տարւող աշխատանքներին:

Այնուհետեւ արտայայտեց հոգէ. S. Անանիա Վրդ. Գումանեանը, ով շնորհաւորելով միութեան նորընտիր վարչութեանը, բարձր գնահատեց անդամութիների անխոնց ու ժրաշան գործունեութիւնը, որով իրօք խթան են հանդիսանում համայնքի աշխուժացման ու ծաղկման նիրական գործին: Հոգէ. Հայր Սուրբն իր խօսքով դրաւոց միութեան անցեալ եւ ներկա բոլոր վարչութիւններին՝ բնութագրելով նրանց որպէս նախաձեռնող, կազմակերպող եւ յանձնառու վարչութիւններ, որոնք ամենայն նիրածութեամբ՝ հաւատարիմ մնալով միութեան կանոնագրին՝ նոյն օղակը շարունակում են աւելի վերելք արձանագրելով: Հոգէ. Հայր Սուրբի բարձր գնահատանքին արժանացաւ նաեւ համայնքի վարչութիւնը, որը եւս շարունակ եղել է միութեան կողքին, քանի որ միասնական գործունեութիւնն է համայնքի ծաղկման գաղտնիքը:

Օրոյ բարեմաղթանքներին իրենց գեղեցիկ արտայայտութիւններով միացան նաեւ արժն. Քահանայ Հայրն ու Համայնքի վարչութեան նախագահ՝ պր. Մելքոն Շիրամեանը:







**շամեան**

- 300,000-ական ոիալ. Համօ Պողոսեան, Հայկուշ Դեհբաշեան, Աճիա Անդրիասեան, Թանգիկ Միրզախանեան, Դերենիկ Թորոսեան, Սուէ Պողոսեան
- 200,000-ական ոիալ. Ռուբէն Զամի, Ամիթա Խաչիկեան, Լիճա Մովսիսեան, Սեղա Յովհաննիսեան, Լուսիկ Ասատրեան, Մեղրի Ղուկասեան, Թային Խաչատրեան, Ադիա Մուրադեան, Նւարդ Փանոսեան, Էջմին Ղետնիեան, Վեհանուշ Խուդաբաշեան, Արագ Տէր-Գրիգորեան, Արփա Մարգարեան
- 150,000-ական ոիալ. Անայիս Ամրանեան, Վերգին Համբառմեան
- 100,000-ական ոիալ. Մուկուշ Գրիգորեան, Վանէ Յարութիւնեան

**Ն.Զ. Հայ Կանանց Գրութեան Միութիւն**

- 1,500,000 ոիալ. Շողիկ Յովկէփեան
- 1,000,000-ական ոիալ. Ռազմիկ Սիմոնեան՝ Լուսաբեր Ռուլութեամի յիշատակին, Վերոնիկ Սաֆարեան, Սոյթանի
- 500,000-ական ոիալ. Մագիկ Հայկունեան՝ Լուսիկ Ուկանեանի մահիան քառասունի առթիւ, Արեւիկ Ամիրչեան
- 350,000 ոիալ. Մարին Մարկունեան և Սթելլա Գալստեան
- Խոհանոցի կամկարավի. Զեփին Վարդեաննեան
- Սեղանի ծածկոց. Սիմոն և Հրաշիկ Ամիրչեաններ
- Անևասպ, մահճակալ, Ենթանակ, երկու հատ ճոճիկ, հոգեճաշ. Դիանա Ղազարեան՝ իր քրոջ՝ Էլիփա Ղազարեանի յիշատակին
- Հոգեճաշ. Արիս և Արմինէ Թահմազեաններ՝ իրենց մօր յիշատակին
- Սուրբ Բիբրասիրովին. Հիլդա և Վոլգա Ղարախանեաններ՝ Պվսան Ղարախանեանի յիշատակին
- Ծաղկեփունչ. «Վոլթուս» ծաղկավաճառանոց՝ Ամանորի առթիւ
- Սընդամթերք. Ադիա Գարիբեան, Քրիստ Պողոսեան, Արաքս Թահմազեան, Ժաներ Խւճիկեան, Արեւիկ Սահմակեան, Մարո Տէր-Յովհաննիսեան, Յովիկ Քիլիշեան, Սիմոն և Հրաշիկ Ամիրչեաններ, Ժենիկ Օրոշեան, Արմին Թահմազեան, Ժենիկ Տէր-Գրիգորեան, Արին Շիրանեան, Արսին Ստեփանեան, Յովիկ Աւետեան, Արմին Սիմոնեան, Դերիկ Խուդավերդեան, Սարգս Սերժիկ Նազարեան, կյուք, Դեհիան, Վարին

**Հայ Ուս. Զիարմահալ Միութիւն**

- 500,000 ոիալ. Նւարդ Աղամալեան
- 200,000 ոիալ. Ցաւերժիկ Կարապետեան՝ իր ամուսնու՝ հանգուցեալ Հայրիկ Կարապետեանի յիշատակին

**85-ամեակի առթիւ**

- 1,000,000 ոիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Լուսին և Արփին Ստեփաննենք, ոմն
- 850,000 ոիալ. Նորա Չամիջանեան
- 500,000 ոիալ. Սոնիա Միրզաբեկեան, Վարուժ Ղարախանեան, Հայրուկ Մարգարեան, Մարտիրոս Գասպար-Ղիասեան, Նորիկ և Արսին Արդալեաններ, Նւարդ Աղամալեան, Ռիթա Մինասեան, ոմն

**Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առընչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, Համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահնշահրի Հայ Համայնքինը եւ տեղի «Արարատ» միութեան մասնաճիւղինը՝ Վիլեթ Յարութիւնեանը եւ Ակդա Մուրադեանը:**

**Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը:**

- 250,000 ոիալ. Սիմոն Համբարչեան

- 200,000 ոիալ. Ծաղկուշ Եղագարեան, Զարդիկ Սութիասեան, Յասմիկ Փանոսեան, Ալֆրեդ Ղարախաննեան
- 150,000 ոիալ. Ամիթա Խաչատրեան, Նւարդ Փանոսեան, Ռազմիկ Խւճիկեան
- 100,000 ոիալ. Սաթենիկ Սիմոնեան, Վարդուշ Հախնազարեան, Համասփիտ Մարգարեան

**Փերիոյ Կրթասիրաց Միութիւն**

- 10,000,000 ոիալ. Ալո Կիրակոսեան՝ իր մօր՝ Գեղովալ Կիրակոսեանի, և իր քրոջ՝ Անահիտ Կիրակոսեանի մահիան տարելիցի առթիւ

**Հայ Մակոյթի Օրւայ արթիւ**

- 3,000,000 ոիալ. Վազրիկ Մարկոսեան
- 2,000,000 ոիալ. Մանէլ Բաղդասարեան
- 1,000,000-ական ոիալ. Հայկազ Ղազարեան, Վարդուշ Զարգարեան
- 600,000 ոիալ. Հայկազ Պետրոսեան
- 500,000-ական ոիալ. Հայ ուս. Զիարմահալ միութիւն, Սեւան և Սոնա Ղազարեաններ, Արարատ Քեշիշեան, Արշամ Ղազարեան, Մինա Թահմազեան, Հայկազ Ղարիբեան, Սոնիկ Կիրակոսեան, Գարեգին Մարկոսեան, Սուրեն Սեթաղակեան, Ղազար Պետրոսեան, Արշալոյս Պարսամեան, Եղիշ Վարդումեան, Երևանի Պողոսեան, Գուրգէն Թահմազեան, Մասիս Խաչիկեան, Զոհրաբեաններ, ոմն
- 300,000-ական ոիալ. S. Խաչատրու քինց. Զարգարեան, Վարդան և Ռիմա Մկրտչեաններ, Անդրանիկ և Սիրան Ասաւեաններ, Քաղլեթ Սիմոնեան, Մարտիրոս Յովկէփեան, Առաք Խուդավերդեան, Էջիկ Յակոբեան
- 250,000-ական ոիալ. Լուսիկ Ասատրեան, Արտուշ Սիրջանեան

- 200,000-ական ոիալ. Գալուստ Սիմոնեան, Անդրանիկ Յակոբեան, Հայկազ և Ժարմանի Համբարձումներ, Գուրգէն Թահմազեաններ, Անդրանիկ և Սիրան Ասաւեաններ, Երանի Օրոշեան, Արմին Թահմազեան, Ժենիկ Տէր-Գրիգորեան, Արին Շիրանեան, Արսին Ստեփանեան, Յովիկ Աւետեան, Արմին Սիմոնեան, Դերիկ Խուդավերդեան, ոմն

- 150,000-ական ոիալ. Բալասան Դիլանչեան, Աղանուր Մինասեան

- 100,000-ական ոիալ Անահիտ Սեթաղակեան, Անդրանիկ Ղազարեան

**Սրբագրում «Տեղեկատու»-ի թիւ 109 համարից****Փերիոյ Կրթասիրաց Միութիւն**

- 10,000,000 ոիալ. Ազնիկ Կիրակոսեան՝ Գեղովալ Շիրամեան-Կիրակոսեանի յիշատակին

**Մանլ հիւանդների օգնութեան ֆոնդ**

- 10,000,000 ոիալ. Մուկուշ Զիարմահալ՝ Հայրիկ (Աւագ) Կարապետեանի յիշատակին

**ՄԵՐ ՏԱՍՏԵՆ**

Խլիֆե ցրի արամե աշխան և յնու Իրան

Ճնծով պտի 81735-115

Armenian Cathedral - P.O.Box 81735-115

New - Jufa, Isfahan, Iran

[WWW.Norjughha.ir](http://WWW.Norjughha.ir)

[WWW.Vank.ir](http://WWW.Vank.ir)

E-mail: [Sourby@yahoo.com](mailto:Sourby@yahoo.com)

Tel: +98-31-36243471-2

Fax: +98-31-36270999



1915 ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆԻԹԵԱ  
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ



35-ԱՄԵԱԿ

Հ.Յ.Դ.

«ՌՈՒԲԵՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՈՒԽ. ԶՀԱՐՄԱՆԱԼ ՄԻՈՒԹԻՒՆ

85-ԱՄԵԱԿ



125-ԱՄԵԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՇԵԱԿԸՆԻԹԻՒՆ